Թ. ՏԱՐԻ 2629 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 19 ՍԱՀՄԻ 4385 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1892 19 ՌԷՊԻՒԼ ԱԽԸՐ 1310 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعلیه‌ده غلطه‌ده آره‌ولك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳԻՐ

Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան դրամով արծաթ	150
» »	Վեցամսեայ	75
» »	Եռամսեայ » »	40
Օտար երկիրներէ	Տարեկան Փրանք	56
» »	Վեցամսեայ	28
Ընդհ. թուղթի վրայ ծանուցմանց տողը ·	Տարեկան Օսմ. Ոսկի	2
Գաւառաց բերասարի ծախքը միօրինակ	Դրուշ.	50

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր.

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ՀՈԿՏ. 28/9 ՆՈՅՄ. 1892

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՌՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ ՊԱՐՏԱՏՈՄՍՔ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՔ ԹՈՒՐՔԻՈՅ

Ոմանք Հանրային Պարտուց Վարչութիւնն եւրոպական վարչութիւն մը կը կարծեն։ Սխալ կարծիք։ Իրաւ է որ Վարչական Խորհուրդը բաղկացեալ է արժէտեարց ներկայացուցիչ մի քանի եւրոպացիներէ։ Իրաւ է որ քանի մը գլխաւոր պաշտօնեայներ օտարահպատակ են։ Բայց մտածել պէտք է որ այս վարչութիւն 4,528 պաշտօնեայներէ բաղկացեալ է, որոց 38ը միայն եւրոպացի են կամ օտարահպատակ։ Մնացեալք տեղացի են, և տեղացիներուն մէջ ալ 4,194 պաշտօնեայք Մահմէտական են, և Քրիստոնեայք ու Հրեայք 296 հոգի են միայն։ Աւասիկ տեղային տարրէ բաղկացեալ վարչութիւն մը, որոյ մատակարարութիւնն ինչպէս եւրոպացի արժէտեարց, նաեւ կայսերական կառավարութեան գոհունակութեան արժանացած է։ Շատ քաջալերական իրողութիւն մ'է այս. զի կը ցուցնէ բնիկ տարերաց կարողութիւնն և ընդունակութիւնն. որովհետեւ Հանրային Պարտուց Վարչութեան նոյն իսկ բարձրագոյն պաշտօններու մէջ կան բնիկ տարրեր որք այս հաստատութեան առաջին տարիէն ի վեր կը պաշտօնավարեն, և իրենց վարչական ձեռնհասութեամբ և իմացական հանգամանքներով ամենէն խստապահանջ օտարազգիներուն անգամ գնահատութեան արժանացած են։

Այս Վարչութիւն իւր վերջին տարեշրջանին մէջ Օսմ. Տէրութեան հասոյթէն մէկ որոշեալ մասը մատակարարելով 2,448,298 ոսկի գանձած է, յորմէ զեղչելով իւր ծախքեր և զանազան կորուստներ և վճարումներ, երկու միլիոն 66,571 ոսկւոյ զուտ հասոյթ մ'ունեցած է ի ձեռին, որ նախընթաց տարւոյ զուտ հասոյթէն 77,924 ոսկի աւելի է։ Արդ, Վարչութիւնն այս երկու միլիոն սաչափ ոսկւոյ գումարն ինչ բանի գործածեր է։—Աւասիկ հարցում մը որոյ պատասխանը շատ մը նկատմամբ շահագրգիռ կրնայ ըլլալ։

590,000 ոսկի յատկացուած է Բրիօրիդէ կոչուած պարտքին և արտասովոր գլխավճարին, որ Օսմ. Տէրութեան միւս պարտուց վրայ առաջնութեան իրաւունք ունի, (և Բրիօրիդէ բառն ալ այս առաջնութիւնը կը ցուցնէ)։ Կը յիշուի թէ այս առանձնաշնորհեալ պարտք 1890ին վերակազմուեցաւ 100ին 4 տոկոսով, գլխավճարն ամեն տարի 1 % ըլլալու պայմանաւ, և անուանական դրամագլուխն է 8,609,964 ոսկի, և մէն մի պարտատոմսը կ'արժէ 500 ֆր.

Մնացեալ 1,476,571 ոսկիէն 1 միլիոն 181,257 ոսկին (ամբողջին 4/5 մասն) յատկացաւ 1 % տոկոս մը վճարելու Թուրքիոյ Հանրային Պարտքին չորս կարգերուն, և 295,314 ոսկին (1/4 մասը) գործածուեցաւ այս պարտքին սովորական եղանակաւ ջնջման։

Եթէ աւելի մանրամասնութիւն խնդրէք, սա փոքրիկ ցուցակ կրնայ գոհացնել զձեզ։

	Օսմ. Ոսկի
Հանրային Պարտուց յատկացեալ	2,066,571·28
Թ. տարեշրջանէն աւելցած դրամ	2,595·76
Գումար	2,069,167.04

Այս գումար բաշխուած է սապէս.

Բրիօրիդէներուն 4 % տոկոս	430,500.—
Հանրային Պարտուց 4 Կարգերուն	1,005,025·16
Երկաթուղւոյ Պարտատոմսերուն	156,325.48
1863—4, 65 եւ 73ի Թղթոց	9,458·94
	1,601,309.58
Սովորական գլխավճար	295,314.25
Թ. շրջանէն մնացորդ	2,595·76
Արտասովոր գլխավճար	159,500.—
	457,410.01
Միջնորդչէքի եւ ծախքի հաշուէ	954·14
Գումար	2,059,673·73

Սոյն երկու գումարներու տարբերութիւնն, 9,493 ոսկի եւ 31 հարիւրորդ, կը ներկայացնէ երեւոյթ մը որ առաջին անգամ տեղի կ'ունենայ Հանրային Պարտուց Վարչութեան հաստատումէն ի վեր։ Սոյն Վարչութեան հասոյթք սովորական յատկացումներուն բաւելէն ետեւ այս իբր ինն հազար հինգ հարիւր ոսկւոյ գումարը կ'աւելնայ, ապագային ուրիշ գումարներու հետ միացուելով Հանրային Պարտուց չորս կարգերուն (Սէրի) վճարեալ տոկոսին չափն աւելցնելու համար։

Վերջին ժամանակներս Ռումելիի երկաթուղւոյ պարտատոմսերուն անորոշ վիճակին վրայ բաւական խօսուած ըլլալով, շահեկան կրնար լինել ներկայ տեղեկագրին պարունակութիւնն այն մասին։ Դժբախտաբար, տեղեկագիրն այնպէս խմբագրուած է որ տարեկան հաշիւները միայն կը պարունակէ բաւական չոր կերպով, և Վարչութեան խորհուրդներուն ու ձեռնարկներուն վրայ պայծառ գաղափար մը չի տար։ Ցայտնի է թէ Վարչութիւնը փոխանակ 100ին 58ի՝ 72 վճարելու առաջարկ մ'ըրաւ, որ ի դերեւ ելաւ միայն իտալացի արժէտեարց ընդդիմութեամբ, եւ թէպէտ անցեալ օր ծանուցինք Վսեմ. Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի ծրագիրն, որ Բարձր. Մեծ-Եպարքոսին կողմէ Հանրային Պարտուց Վարչական Խորհրդոյն հաղորդուած է, բայց ինչպէս ի պաշտօնէ ծանուցուեցաւ, ծրագրոյն վրայ եղած հրատարակութիւնը պաշտօնական հանգամանք չունի, այն գերազանց պատճառաւ զի կարգ մը շաւիղներէ պիտի անցնի, և կայսերական հաւանութեան մատուցուելէ յառաջ, արժէտեարց ամեն դասակարգին առանձին վաւերացումն ընդունել պէտք է։

Վերջին տարեշրջանին մէջ, Հանրային պարտուց մայր-դրամին 1 առ 100 համեմատութեամբ վճարում մ'ըլլալով, այս ընդհանուր վճարումէ նոյն համեմատութեամբ Ռումելիի Երկաթուղւոյ Պարտատոմսից բաժինն կ'իյնար 156,325 ոսկի, և այս գումարէ 125,558 ոսկի յատկացած է տարւոյն ընթացքին մէջ եղած 3,600 պարգեւաւոր և պարզ Թուղթերու վճարման, և աւելցած 30,767 ոսկին գործածուած է հրապարակէն պարտատոմս գնելու, այնպէս որ Հանրային Պարտուց Վարչութիւնն այսօր կլորիկ պահեստ մ'ունի հրապարակէն վերցուած պարտատոմսերու։ Այս 10րդ տարեշրջանի մէջ Վարչութիւնը 10,133 Ռումելիի պարտատոմս գնած է հրապարակէն, 30,913 ոսկի վճարելով, և ասոնցմէ 75ը պարգեւ կամ գլխավճար շահած ըլլալով տարւոյն մէջ, մնացած է 10,058 պարտատոմս։ 1891 մարտի սկիզբը գնուած կար 31,709 պարտատոմս որուն համար 87,982 ոսկի վճարուած էր, և այս տարւոյ յաւելումով, Վարչութիւնը կ'ունենայ 41,767 պարտատոմս 118,683 ոսկւոյ գնման արժէքով, մինչ արդի արժէքն աւելի է մարտ ամսոյ արժէքէն։ Մինչեւ 1891 մարտ Վարչութիւնն իւր ունեցած պարտատոմսերուն վրայ պարգեւի կամ գլխավճարի ձեւով 1,554 ոսկի շահած էր, եւ այս տարի ալ (մինչեւ մարտ) 784 ոսկի շահած ըլլալով, 2,338 ոսկւոյ շահը գործածած է նոր պարտատոմսերու գնման, որով ներկայ ԺԱ. տարեշրջանին մէջ ունի 42,501 պարտատոմս, 121,030 ոսկւոյ գնման արժէքով, այն 181 հատէն զատ որք վիճակահանութենէ ելած են։

Հիմակ եթէ ուզէք գիտնալ թէ Հանրային Պարտուց Վարչութիւնը տասն տարիէ հետէ ինչ ծառայութիւն մատուցած է Տէրութեան, ասոր ալ պատասխանը թուանշանով կրնանք տալ շնորհիւ այս տեղեկագրին, որ՝ ինչպէս ըսինք՝ թուանշանէ զատ ուրիշ բան չի պարունակեր արդէն։

Տասն տարի յառաջ Տէրութիւնն 116,135,062 ոսկի պարտք ունէր, քոնսոլիտներուն երկուքը մէկ ընելէն և անուանական պարտքն իրական պարտքի վերածելէն ի վեր։ Տասն տարւոյ մէջ այս պարտքին որոշեալ տոկոսը տրուելէն ետեւ, այնպէս որ վերակազմեալ Օսմ. Պարտուց քոնսոլիտէներն ունեցողներ 100ին 5է աւելի տոկոս ստացան, Պարտքին մայր-գումարէն 6,745,480 ոսկի պակսած է մինչեւ ներկայ տարւոյս մարտի սկիզբն, որով Տէրութեան պարտքն իջած է 109 միլիոն 389,58 ոսկւոյ։ Այս ալ բան մըն է, զի վերջապէս 109 միլիոնն և առաջուան 116 միլիոնը նոյն գումարը չեն, և Տէրութեան մը պարտքը ջնջելու գործին մէջ տասնամեայ շրջան մը ո՛չ ուրեք մեծ բան մը կրնայ արտադրել։

Բայց եթէ մանաւորապէս ուզէք գիտնալ թէ իւրաքանչիւր տեսակ պարտքէն ինչ պակսած և ինչ մնացած է, պիտի պատասխանենք թէ Ա. կարգի պարտքն 7,831,869 ոսկիէն իջած է 3,140,237 ոսկւոյ, Բ. կարգը՝ 11 միլիոն 49,307էն 10,553,757 ոսկւոյ ինկած է, Գ. կարգն 33,604,176էն եղած է 33,180,676 ոսկի, և մեր վաղեմի բարեկամը զոր պարզապէս Քոնսոլիտ անուամբ կը ճանչնէք՝ Դ. «Սէրին» տեղէն շատ երերցած չէ, բայց Աստուած ողորմած է, անոր ալ կարգը պիտի գայ, թէպէտ կարգը Չորրորդ ըլլայ։ Հիմակուհիմայ 48,017,161 ոսկւոյ պատկառելի գումարն իւր վեհաշուք երեւոյթէն բան մը կորուսած չի կրնար համարուիլ՝ 47,592,231 ոսկւոյ իջնելով, որ «իջնել» ալ չըսուիր, եթէ խօսքին չիտակը կ'ուզէք։

Իսկ Ղալաթիոյ հրապարակին սիրական թուղթն, որ այնքան գեղեցիկ երազներ տեսնել կուտայ այնքան չքաւոր կամ այնքան բազմապահանջ մարդոց, իւր իրական արժէթուղթէն զատ նոյն իսկ անոր ստուերոյն՝ բախտատոմսերոյն՝ հազարաւորներու երազել տալով 16,000 ոսկւոյ մեծ պարգեւը, Ռումելիի Երկաթուղւոյ պարտատոմսերն ըսել կ'ուզենք, որոց դրամագլուխը 15,632,547 ոսկի էր, 14,922,678 ոսկի մնացած ըլլալով տարւոյս մարտի սկիզբը, դեռ շատ ժամանակ իրենց օգտաւէտ պաշտօնը պիտի կատարեն, շատ սիրտեր պիտի հրճուեցնեն, շատ բախտեր պիտի շինեն, և կ'երեւի թէ օր պիտի գայ որ 100 ֆր.էն աւելի պիտի արժէ իւրաքանչիւրն, և պիտի հարցնենք թէ այս ա՞ն թուղթն է զոր երբեմն 30 ֆր.ի գնել կը գժկամակէինք։ Աւասիկ ինչ բաներու կրնայ ծառայել Երկաթուղի մը, նոյն իսկ Ռումելիի Երկաթուղին, որոյ երկաթեայ գծերն եթէ զմեզ քաղաքակրթութեան հետ կը միացնեն, անոր թուղթերն ալ զմեզ երջանկութեան բնագաւառները կը փոխադրեն ամեն երկու ամիսն անգամ մը, թէպէտ երեւակայութեան թեւերով ըլլայ, հոգ չէ. զի հոն ուր իրականութիւնը մեր ձեռքէն կը սպրդի, Երազն ալ բարիք մը կրնայ համարուիլ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ մէջ Նախարարական տագնապը վերջ չգտաւ։ Կոմս Սաբարիի դիրքը խախուտ է դեռ։ Բարեկամ թերթեր անգամ կը գուշակեն թէ շատ չանցած Հունգարիա պէտք պիտի ունենայ զօրաւոր վարչութեան մը։ Ազգային-գլխաւորական արժանապատուութեան վերաբերեալ խնդիրը զոր անցեալ օր յիշեցինք և եկեղեցական խնդիրն յառաջ բերած են այս կացութիւն։ Վիեննայէ առ Թայմզ կը հեռագրուի թէ Հունգարիոյ Ներքին վարչութեան չփոթ խնդիրները կարգադրելու համար զանազան կուսակցութիւններէ զօրաւոր նախարարութեան մը կազմութիւնն ամենուն փափաքն է այս պահուս։ «Աշխարհական իշխանութեան բարձումէն ի վեր, Վատիկան գլխաւոր զբաղում ըրած է քաղաքականութիւնն եւ համեմատաբար երկրորդական տեղ մը տուած է զուտ կրօնային խնդիրներու։ Այս խնդիրներն իսկ քաղաքական տեսակէտով նկատուած են։ Իտալիոյ թշնամիները Պապին բարեկամներն համարուած են, և Իտալիոյ բարեկամները Պապին կողմէ իբրեւ թշնամիներ նկատուած են։ Այս երեւոյթ ո՛չ ուրեք այնքան պայծառ կը գտնուի որքան Աւստրիոյ-Հունգարիոյ մէջ, և հետեւանքն երբեք այժմեան չափ զգալի եղած չէր։ Կաթոլիկ կղերին վերջին տարիներս Միացեալ Նահանգաց, Անգլիոյ և ուրիշ երկիրներու մէջ ցուցած գործունէութիւնն Հունգարիոյ մէջ ալ կը գտնուի, և ասոր ծագում կ'առնուն զանազան կղերական խնդիրք որք մաճառ վարչութիւնը կը զբաղեցնեն։ Այս խնդիրք անլուծելի չեն, բայց ազդեցիկ նախարարութեան մը պէտք կայ։ Բանն այն է սակայն որ մաճառ գլխաւոր քաղաքագէտք այս պահուս յօժարամիտ չեն երեւիր նախարարապետի պաշտօն ստանձնել։»

ՊԵԼՃԻՈՅ մամլոյն մէջ Զօր. Պրիալմոն վերստին օրուան մարդն է, որովհետեւ իբրեւ ամրութիւններ շինող մասնագէտ իւր մեծ հեղինակութենէն զատ, այս զօրավար քաղաքական կեանքի մէջ մտած է իբրեւ Պրուսէլի երեսփոխան, և փութացած է Կ. Պոլսէ դառնալ Պրուսէլ, Խորհրդարանի բացման ներկայ ըլլալու։ Պելճիոյ Խորհրդարանին առաջիկայ նստաշրջանն յոյժ կարեւոր պիտի ըլլայ՝ Սահմանադրութեան վերաքննութեան խնդրոյն պատճառաւ։

ՍՊԱՆԻՈՅ մանուկ թագաւորն, որոյ վրայ կեդրոնացած է բովանդակ սպանիական ազգին ուշադրութիւնն, ապաքինութեան ճամբու մէջ մտաւ, և անցեալ շաբթուն կարողացաւ կառքով շրջագայութիւն ընել, բայց տակաւին չուզուիր Մատրիտ փոխադրել զինք, հիւանդութեան երկրորդ անգամ կրկնուելէն վախնալով։ Թէպէտ խնամակալ-թագուհին իւր որդւոյն հետ Գրանատա պիտի ճամբորդէր, բայց այս խորհուրդն ալ մի կողմ թողուեցաւ առ այժմ, և Արքունիքը կը մնայ Սեվիլ։

ԼՈՒԹԷՐ Ի ԳԵՐՄԱՆԻԱ.—Վիթենպերկի Լութերեան հանդէսից գլխաւոր շարժառիթն էր տեղւոյն դղեակի եկեղեցւոյն վերաշինութեան աւարտման առթիւ նաւակատիքը, զոր Վիլհելմ Բ. Կայսր մասնաւոր շքով մը կատարել ուզեց, ի պատիւ իւր հօր և պապուն որք այս վերաշինութիւնը կատարել տուած էին։ Վիթենպերկ, համալսարանական վաղեմի քաղաքն, երբեմն Սաքսոնիոյ բաժին մէջ, բայց յետոյ Պրուսիոյ անցած, գերման բողոքականաց մէջ շատ կը յարգուի Լութերի արկածալից կեանքին մէջ բռնած տեղւոյն համար։ Լութեր հոն դասական աստուածաբանութիւն կը սովրէր և Սրբոյն Օգոստինոսի գրուածոց մէջ կարդացածները կը քարոզէր, երբ եկաւ Թեցել, «Ներողութիւններ» ծախելու Պապին կողմէ, ի նպաստ շինութեան Սրբոյն Պետրոսի եկեղեցւոյն։ Լութեր զայրացաւ տեսնելով թէ այս մարդ Երկինքի արքայութիւնը դրամով կը վաճառէր յայտնապէս։ Ամենայն Սրբոց դղեակի եկեղեցին կայսրընտիր իշխանին պալատան շրջափակին մէջ կը գտնուէր, և հոկտ. 31ին Ամենայն Սրբոց տօնին առջի իրիկունն հոն գնաց Լութեր, երբ ի հանդէս պիտի զրուէին մասունքներն, և եկեղեցւոյն դրան վրայ փակցուց հռչակաւոր 95 նախադասութիւնները կամ Thèseերն, որով կը դատապարտէ Թեցելի գործն ու վարդապետութիւնն, և այն դուռ ցայսօր նոյն նախադասութեանց անուամբ Thesenthür կը կոչուի։ Այս դէպքէն ի վեր, որ առաջին «բողոքն» էր Բողոքականութեան հիմնադրին՝ ընդդէմ պապական վարդապետութեանց, դղեակի եկեղեցին Գերմանիոյ պատմական վայրերէն մին նկատուած է, և այս դէպքի չորրորդ հարիւրամեակին առթիւ էր որ Վիլհելմ Բ. Կայսրն հոկտ. 31ին կատարեց նոյն եկեղեցւոյ վերահաստատման նաւակատիքն։—Ի Վիթենպերկ, Լութեր հանդիսապէս ոչնչացուց այն Կոնդակն որով իւր հերետիկոսութիւնը կը դատապարտուէր։ Վիթենպերկէ կայսերական ատեանը տարաւ զինք Վորմսի աւագաժողովին։ Վիթենպերկ դարձաւ իւր հակապապական համոզումներն համարձակ պաշտպանելէն ետեւ։ Ի Վիթենպերկ դարձաւ նաեւ ճախողութեան օրերու մէջ, երբ Կայսրութեան կողմէ մերժուեցաւ, յայտարարելով թէ ինք պէտք է գտնուի հոն ուր պարտականութեան ձայնը կը կանչէ զինք։ Ի Վիթենպերկ ամուսնացաւ եկեղեցական սքեմը թողլէն ետեւ, և նոյն դղեկի եկեղեցւոյն մէջ թաղուեցաւ, իւր բարեկամ և աշակերտ Մելանքթոնի քով։ Հոն գերմաներէնի թարգմանեց Աստուածաշունչն, ոչ միայն կրօնական այլ և գրական սքանչելի նուէր մ'ընելով իւր ազգին, և հոն շարադրեց այն գերմաներէն շարականներ որք ցայսօր բերկրութեամբ կ'երգուին ուր որ բնիկ գերման բողոքականներ։ Գերմաներէն լեզուին Լութերի ձեռամբ այս նորօրինակ կիրառմանը ուրիշ ամեն ձեռնարկութենէ կամ տնօրինութենէ աւելի նպաստեցին Գերմանիոյ մէջ ազգային ոգին կազմելու և արծարծելու և գերման ազգին միութիւնը պատրաստելու, որ հազիւ իրականացաւ չորս դար ետքը միայն։

ՄՈՆԱՔՕՅԻ Միջազգային Խաղարանը վերջին տարեշրջանին մէջ 23 միլիոն ֆր. շահեր է, որ է մէկ միլիոն ֆր. աւելի նախընթաց տարեշրջանէն։ Ընկերութեան դրամագլուխն է 30 միլիոն ֆր., 500 ֆր.նոց 60,000 բաժնեթղթով։ Այս 500 ֆր. գնով ստացող բաժնետէրք այժմ տարեկան 38 առ 100 շահ կ'առնուն, իսկ այս աւուր գնով առնողներ 9 ու կէս առ 100 շահ։

—)(171)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՐ

ՍԱՆՏՐԻՅԵՈՆ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԾԻԱԾԱՆԸ

—Ո՞ւսկից պիտի հասկնայ թէ անծանօթ հօրմէ ծնած է և թէ իր մայրը Կապրիէլ Անկլատ կ'անուանուէր։ Միթէ այսչափով պիտի բաւականանա՞յ։ Ոչ։ Աւելին պիտի ուզէ գիտնալ և չեմ ուզեր որ չիմացունեն իրեն թէ մայրը զոհ մըն է եղած։ Տիկին, պէտք է, անհրաժեշտ է իմացունել իրեն որ թէեւ օրինաւոր հայր չունի, որ իր մայրն ա՛լ չապրիր, սակայն ընտանեզուրկ չէ։ Պէտք է գիտնայ թէ մեծ հայր մը և մօրեղբայր մը ունի որ կը սիրեն զինքը և կուզեն մասնակցիլ իր գորովին։ Եւ ասոր համար է, տիկին, որ, յանուն հօրս, կուզամ խնդրել որ ազատ արձակէք զայն ձեզ տուած խոստումէն։

—Պարոն Անկլատ, Մոնտրաժէի դղեակն երթալո՞ւ մտադիր էք, հարցուց տիկին Մելվիլ։

—Այո, տիկին։

—Օ՛հ, ոչ, ըսաւ նա աշխուժիւ և իբր զարհուրած, մի՛ ընէք այդ բանը։ Գիտեմ թէ ա՛լ պարտաւոր չեմ Մառի-Մատըլէնէն ծածկել իր ծննդեան գաղտնիքը, ոչ ալ ուշացունել իրեն ըսելու թէ մեծ հայր մը և մօրեղբայր մը ունի. բայց կաղաչեմ, պարոն Անկլատ, ինձ թողուցէք սոսկալի յայտնութիւնն իրեն ընելու և անձամբ բացատրելու հոգը այն պատճառներն որոց համար այնքան երկար ատեն լռութիւն պահեցի. ո՛հ, ապահո՛վ եմ թէ պիտի աղէկ հասկնայ զիս։ Եւ երբ ամեն բան իմացունեմ իրեն, այո, ամեն բան, պարոն, ամեն բան, վասնզի չեմ ուզեր որ անգիտանայ թէ Բօլ Մելվիլ, իմ զաւակս, իր եղբայրն է,—պէտք է որ սիրեցեալ աղջիկը գիտնայ այս բան,—այն ատեն, պարոն, երբ ամեն բան ըսեմ իրեն, դուք և ձեր հայրը կրնաք Մոնտրաժէ գալ. ուրիշ բան չի մնար ձեզ ընել եթէ ոչ բազուկներդ բանալ։

Հրամանատարը տագնապած էր։

—Այո, տիկին, թողուցէք, բայց...

—Լաւ ուրեմն, գոհ չէ՞ք։

—Վասնզի ես և հայրս կը սպասուինք ի Մոնտրաժէ։

Տիկին Մելվիլ սպային երեսը նայեցաւ, հասկնալ ջանալով։

—Ուրեմն արդէն գրա՞ծ էք, հարցուց Պլանշ։

—Ոչ, տիկին, քանի որ կուզամ խնդրել ձենէ որ արտօնէք մեզ ինքզինքնիս ծանօթացնելու Մառի-Մատըլէնին։

—Բայց, չեմ հասկնար, բացատրեցէք...։

—Շատ պարզ է, տիկին. հրաւիրուած ենք քանի մը օր անցունելու Մոնտրաժէի դղեակը։

—Բլէռֆոնի կոմսի՞ն կողմէ։

—Ոչ, տիկին, այլ տիկին կոմսուհիին հօրը կողմէ, տը Մարբուա մարքիզը, որուն բարեկամն ըլլալու պատիւն ունի հայրս։ Ժամանակաւ, Ափրիկէի մէջ, Ժերօմ Անկլատ երջանկութիւնն ունեցած է Մարբուա մարքիզին կեանքն ազատելու, որ այն ատեն իր հրամանատարն էր։ Այս պատճառաւ է որ հայրս պատուանշան առած է։

—Պարոն Անկլատ, ո՞ր օրը պիտի հասնիք ի Մոնտրաժէ։

—Պ. տը Մարբուա գրեց ինձ թէ յառաջիկայ կիրակի մեզ պիտի սպասեն։

—Շատ աղէկ, պարոն Անկլատ, ժամադիր կ'ըլլանք Մոնտրաժէի դղեակը, ուր նոյնպէս ինձ կը սպասեն։ Անշուշտ գիշերը ճամբայ պիտի ելնէք կիրակի առտու հոն հասնելու համար։

—Այդ է դիտաւորութիւնս, տիկին։

—Ձեր ըրած կարգադրութիւնները մի՛ փոխէք։ Ես շաբաթ իրիկուն պիտի հասնիմ դղեակ, գիշեր չեղած, կարծեմ այս կերպով ժամանակ պիտի ունենամ մեր սիրելի աղջկան հետ խօսակցելու և զայն պատրաստելու։ Այս այսպէս որոշուած է, չէ՞ մի։ Եւ հիմակ, պարոն, մի՛ այնքան խիստ ըլլաք ինձ նկատմամբ. եթէ միշտ ձեր և ձեր հօրը բաղձանաց համաձայն չեմ գործած, ներեցէք խեղճ կնոջ մը որ, ինքն ալ, շատ տառապած է։

—Օ՛հ, տիկին, ըսաւ հրամանատարը խիստ յուզեալ։

Տիկին Մելվիլ դժուարաւ կը զսպէր իր արցունքները։ Բիէռ Անկլատ բռնեց անոր ձեռքը և շրթերուն տարաւ։

—Հաշտուա՞ծ ենք, ըսաւ Տիկ. Մելվիլ։

—Միշտ իրաւունք ունեցած էք մեր խորին սքանչացման, տիկին, պատասխանեց Բիէռ թափանցանց ձայնով, և մեր երախտապարտութիւն մշտակայ պիտի ըլլայ։

—Ձեզ պիտի դարձունեմ Մառի-Մատըլէնը. բայց միշտ թող պիտի տրուի ինձ սիրել զինքը, այնպէս չէ՞։

—Ձեր աղջիկը կը մնայ, տիկին։

—Մինչեւ ամուսնութեան օրն իմ քովս պահելու էի զայն, վասնզի հաստատ միտքս դրած էի ամուսնացունել. ուստի առանց ցաւ զգալու չի բաժնուեցայ անկից։

Եւ իբր թէ գուշակած ըլլար հարցումը զոր հրամանատարն իր շրթանց վրայ ունէր, շարունակեց.

—Բայց պէտք էր, անհրաժեշտ էր այն բաժանումը. Մառի-Մատըլէն հասկցաւ և չվարանեցաւ զոհողութեան առջեւ. չէր կրնար վար դնել զինքը, խնդիրն որդւոյս երջանկութեան, մեր ամենուս անդորրութեան վրայ էր, պարոն Անկլատ, Բօլ կը սիրէր իր քոյրը... տարփանքով։

—Օ՛հ։

—Ձեզ և ձեր հօր պիտի պատմեմ ինչ որ անցած դարձած է Բօլի ամուսնութենէն առաջ և ետքը։ Սիրելի և անուշի՛կ Մառի-Մատըլէն, ա՛հ, որչափ արժանի ցուցած է ինքզինքն իմ գորովիս և իրեն համար ըրածներուս փոխարէնը տալով ինձ։ Վերջապէս, մեկնեցաւ, և երկնային Նախախնամութիւնն է զինք Մոնտրաժէի դղեակն առաջնորդողը, ուր երջանկութիւն պիտի գտնէր։ Կը տեսնէք որ ճակատագիր մը կայ, պարոն Անկլատ։

—Այո, տիկին, կը հաւատամ անոր։

—Անիկա պիտի ամուսնանայ. չեմ ճանչնար Պ. Փօրժ Նօթիէն. բայց Բլէռֆոնի կոմսուհին երկար բարակ խօսած է անոր վրայ. մեծ արժանեաց տէր երիտասարդ մըն է, մեծոգի, անբասիր վարքով, ամեն կերպով կատարեալ, որուն Պ. տը Բլէռֆոն, ինչպէս որ գրած եմ ձեր հօր, փառաւոր ապագայ մը կը վերապահէ։ Եւ յետոյ, ամենէն լաւը, կը պաշտէ Մառի-Մատըլէնը։ Գոնէ այս կողմէն սիրտս հանդարտ է հիմակ։

—Ուրիշ մտահոգութիւննե՞ր ալ ունիք, տիկին, հարցուց հրամանատարը հետաքրքրութեամբ։

Պլանշ հառաչեց, ձեռքը ճակտին տարաւ, և գլուխն երերցունելով, պատասխանեց.

—Երբեք երջանիկ չպիտի ըլլամ, այս է ճակատագիրս. վերջապէս աս ասանկ է. Աստուծմէ սա միայն կը խնդրեմ որ երջանկութիւն տայ անոնց զորս կը սիրեմ։

ԺԳ.

ՏՈՒԱՄԸ

Նախընթաց օրերու տաք մթնոլորտը յանկարծ զովացած էր գիշերը տեղացած անձրեւէ մը և արեւմտեան բաւական ուժգին հովէ մը, որ տակաւին չէր իջած բոլորովին։ Երկինքն ամպոտ մնացած էր, բայց մէկ քանի անամպ տեղեր, որոց մէջ երբեմն կ'երեւէր արեւը, կը ծանուցանէին թէ իրիկուան կողմ օդը պիտի գեղեցկանար։

Ամեն պարագայի մէջ, Բլէռֆոնի կոմսին կառապանը գոցած էր լանտօն որ ընտանիքը Սըլիւս պիտի տանէր, Մոնթիլի մարքիզուհւոյն տունը։

Այն օրը, մարքիզուհին մեծ հացկերոյթ մը կուտար ի պատիւ Մարբուա զօրավարին, զոր եկած էր անձամբ հրաւիրելու Մոնտրաժէ գալուն յաջորդ օրն իսկ։

Մոնթիլի մարքիզը, տասնեւհինգ տարիէ ի վեր մեռած, տղայութեան բարեկամ մը եղած էր Մարբուա մարքիզին և իր զինակիցն յԱլժէրի։

Տիկին տը Մոնթիլ միշտ կը տեսակցէր Մարբուա զօրավարին հետ։ Իր ամուսնոյն բարեկամն էր եղած անիկա, իրեն ալ էր։ Եւ իր միջնորդութեամբն էր որ Բլէռֆոնի կոմսն ամուսնացած էր օրիորդ տը Մարբուայի հետ։ Արդարեւ, երջանիկ համարելու էր ինքզինքն այդ պարագային խաղացած դերին համար. երկու ամուսինք երախտապարտ էին իրեն որք, առանց անոր, գուցէ երբեք չպիտի ճանչնային զիրար, և երջանկութիւնն զոր կը վայելէին անոնք, ամենէն քաղցր վարձատրութիւնն էր այրի մարքիզուհիին։

(Շարունակելի)

Խաղամոլութիւնն աւելի քան երբեք չահ կը բերէ այս ընկերութեան, որ սեղանաւորի դերը կը բռնէ խաղասեղաններուն առջեւ: Մոնաքոյի արդի իշխանն ի գին արտօնութեան իրեն տրուած տարեկան 1 միլիոն 250,000 ֆր.ին ձեռք չի դպչներ, այլ հանրօգուտ նպատակներու կը գործածէ, միտքը դրած լինելով որ 1913ին, երբ պայմանաժամը լրանայ, չնորոգէ արտօնութիւնը: Ընկերութեան գլխաւոր ծախքերէն մին է լրագրերը կաշառել: Տարին գրեթէ մէկ միլիոն ֆր. կը գործածէ այս բանիս: Փարիզի լրագրերէն մին տարեկան 75 հազար ֆր. կ'ընդունի, ուրիշներ 25,000 հազար, մինչեւ 1,000 ֆր., սա միակ պայմանաւ որ Մոնաքոյի Խաղարանին վրայ ո՛չ գովեստ գրեն, ո՛չ պարսաւ, այլ բնաւ անոր խօսքը չընեն: Ուրիշ ծախք մըն ալ սա է որ ընկերութիւնը տարեկան թոշակ մը կը վճարէ իրենց բոլոր հարստութիւնն այս խաղասեղաններուն վրայ կորսնցնող նախկին հարուստներու, որպէսզի ինքնասպանութեամբ գայթակղութիւն չպատճառեն: Այնու հանդերձ, ամեն տարի 5-10 ինքնասպանութիւնք կը պատահին, իբրեւ խաղամոլութեան անհրաժեշտ զոհերն: —Այս տեղեկութիւնք պաշտօնական տեղեկագրէ առնուած են:

ՖԵՐՏԻՆԱՆՏ ԻՇԽԱՆ օրթոտոքս կրօնը պիտի ընդունի եղեր, Թողլով կաթոլիկութիւնը:

ՏՔԹ. ԻՎԱՆ ՊՈԿՐՈՎ, պուլկար ծերունի գրագէտն ու բանասէրն, որ ուղեղային կաթուածի մը պատճառաւ Սոֆիայի հիւանդանոցը փոխադրուած էր, հոն մեռաւ: Պուլկար գրականութեան մեծ ծառայութիւններ մատուցած է: 1843ին ի Վիեննա հրատարակած է Ֆրանսերէն-պուլկարերէն եւ պուլկարերէն-ֆրանսերէն բառարան մը, որ 1873ին Բ. տպագրութեան արժանացաւ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ ահաւոր արկած մը պատահեցաւ ի Վինակտա աւան Վերին Աւստրիոյ: Եկեղեցին բազմութեամբ լի էր, Կ. Պոլսոյ Հայոց կարգմ եկեղեցիներուն պէս դատարկ չէր, եւ դուրսը բուռն մրրիկ մը կը գոռար: Յանկարծ, դուռը կայնող կին մը աղաղակեց թէ եկեղեցւոյ աշտարակը փլչիլ կը սպառնայ: Ամեն մարդ դուրս փախչիլ ուզեց: Զօրաւորք տկարները, այրք կիները կոխոտեցին, 25 անձինք մեռան, աւելի շատեր եղան վիրաւորեալք, եւ հետաքրքրաշարժն այն է որ աշտարակն ապառաժի մը նման հաստատ կը կենայ դեռ:

ԱԶԳԱՅԻՆ
ԼՈՒՐԵՐ

Կեսարիայէն վաւերական երեք ազգայնոց ստորագրութեամբ հեռագիր մը ստացանք, որով կը գանգատին իրենց Առաջնորդին հրաժարականը կեդր. Վարչութեան կողմէ մերժուելուն դէմ, եւ կ'ըսեն թէ այդ հրաժարական ըստ օրինի պէտք էր մատուցուիլ վիճակին գաւառական ժողովոյն: Հեռագիրն ստորագրողք ի վերջոյ կը խնդրեն որ քննութիւն կատարուի Ազգ. Պատրիարքարանի կողմէ:

Արժ. Վահան Ծ. վարդապետ Յակոբեան կիրակի առաւօտ Պանտըրմա ժամանելով, նոյն օրն իսկ եկեղեցւոյն մէջ քարոզ մը խօսեր է կրօնասիրութեան վրայ եւ ազգ. յորդորներ կարդացեր է տեղւոյն ազգայնոց՝ սիրով յարելու Մայր իրենց Ս. Եկեղեցւոյն: Եկեղեցին լցուած է եղեր խուռն բազմութեամբ ժողովրդեան, որոց վրայ յոյժ լաւ տպաւորութիւն թողեր են նորընտիր քարոզչին կորովի խօսքերը:

Պանտըրմէն կը գրեն մեզ հոկտեմբեր 21 թուականաւ.

Վիճակիս գաւառական ընդհ. ժողովոյ ամբողջացման համար համեմատական ցանկէն մնացեալ հինգ անդամոց ընտրութեան երկրորդ քուէարկութիւնը տեղի ունեցաւ ամենայն կանոնաւորութեամբ ամսոյս 18|30 ին կիրակէ օրը, մասնակցութեամբ 313 ազգայնոց, եւ ընտրուեցան՝

Մեծ. Տեարք
Յովհաննէս էֆ. Պալըգճեան
Կարապետ » Շէրիաճեան
Միհրան » Մելիք
Պետրոս » Ճառճեան
Յովհաննէս » Նախնուեան

Ժողովրդեան ամենատաւար եւ լըրջամիտ մեծամասնութիւնն, որ առաջին անգամ ըլլալով տեսաւ քուէարկութեան համար այսչափ կանոնաւորութիւն, փոյթ եւ հոգածութիւն, խիստ գոհ է եւ իր պատկառելի ընդհ. ժողովը կազմած լինելու խոր համոզումն ու գիտակցութիւնն ունի:

Աններելի է մեզ ի վեր չհանել սա պարագայ թէ Գեր. Առաջնորդ Հայրն այս խնդրոյ մէջ ունեցաւ ազգու եւ անկողմնակալ ընթացք, որ խորին գոհունակութեան արժանի է, եւ Պատ. ընտրողական ժողովն, որ ընդ ատենապետութեամբ Վսեմ. Մկրտիչ պէյ Մարկոսօֆի, չմնացայնոյ եւ իմաստուն ուղղութիւն, որ ամեն գովեստէ վեր է:

Նախորդ թուով մը, Թիֆլիզի թերթերէն առնելով գրոյց մը յիշած էինք, թէ Կովկասի կառավարչապետ Պ. Շէրեմէտիեւ պիտի այցելէ Երեւան եւ անտի Ս. Էջմիածին: Այս աւուր ռուսական լրոց բաժնին մէջ ծանուցուած է Պ. Շէրեմէտիեւի ժամանումն ի Թիֆլիզ, հոկտեմբեր 10ին: Մինչեւ այդ թուականն, առաջադրեալ ուղեւորութիւնը տեղի ունեցած չէր, սակայն Պալթուէն կը գրեն թէ Ս. Էջմիածնի Սինոդի Պրոկուրորը Թիֆլիզ կոչուեր է, եւ թէ այս պարագայն ինչպէս նաեւ Պ. կառավարչապետին Ս. Էջմիածին երթալու խորհուրդը վերաբերութիւն ունին կաթողիկոսական հարցին հետ:

Մեծանուն ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսքի անցեալ շաբթու Նիւ-Եորք ժամաներ է ուսկից Շիքակոյի ցուցահանդէսը պիտի երթայ իր նկարներն ի տես դնելու: Այվազովսքի պիտի այցելէ նաեւ Նիագարայի ջրվէժները ու պիտի նկարէ բնութեան այդ հրաշալի տեսարանը որուն նկարը նոյնպէս ի տես պիտի դնէ ցուցահանդէսին մէջ:

Լ. Հէրէլտ կը հաղորդէ թէ երաժշտապետ Տիգրան էֆէնտի Չուխաճեան որ դիտաւորութիւն ունէր այս ձմեռ երթալ ի Կովկաս ուր մեծ ժողովրդականութիւն կը վայելէ, պարտաւորուած է հնտախտին պատճառաւ ի գործ չդնել իւր այս դիտաւորութիւնն. հետեւաբար Չուխաճեան էֆէնտի կը մնայ ի Կ. Պոլիս: Լ. Հէրէլտ յոյս կը յայտնէ, եւ մենք ալ մասնակից ենք այս յուսոյն, թէ Կ. Պոլսոյ հայ ժողովուրդը պիտի փութայ անշուշտ մեծանուն արուեստագէտին մոռցնել տալ այս ուղեւորութիւնը չընելուն վիշտը:

Չուխաճեան էֆէնտիի վրայ առանձինն խօսուած է մեր այս աւուր Գ. էջին՝ ԱՐՁԱԳԱՆԳ գլխոյն մէջ:

Ստացանք Վիէննայի Մխիթարեան Հարց ԱՄՍՕՐԵԱՅ ՀԱՆԴԷՍի նոյեմբերի թիւն, որ կը բովանդակէ՝ Մատենագրական [Խոսրովիկ եւ Գիրք ձեռնադրութեան] — Պատմական [Դրանսիլվանիա] — Հայ բժշկական ձեռագիրք — Դրական [ամառնային ուղեւորութիւն] — Հրատարակութիւնք 1891 ամի — Ցուցակ հայերէն ձեռագրաց — Թղթակցութիւն — Բանասերութիւն — Շրջագայութիւն Նըկարչաց աշխարհին մէջ — Այլեւայլք — Քաղաքական տեսութիւն:

Ընդհան. լուրեր

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ. — Բարձր. Մեծ-Եպարքոսը եւ Դատական, Եվգաֆի, Կրթական, Ելմտական եւ Առեւտրական ու Հանրօգուտ շինութեանց Վսեմ. Նախարարներն երէկ կայս. պալատ երթալով ելմտական գործոց վրայ խորհրդակցութիւններ կատարեցին եւ այս պատճառաւ իրենց պաշտօնատեղիները չերթան երէկ:

Ի Բ. ԴՈՒՌՆ. — Աւստրիական դեսպան Պարոն Ֆոն Քալիչէ երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին եւ Վսեմ. խորհրդականին հետ:

ՀՆՏԱԽՏ. — Պաշտօնական տեղեկութեանց համաձայն, հոկտեմբեր 26ին ի Տրապիզոն հնտախտէ 14 դէպք 5 մահ: Հոկտեմբեր 26 ի երեկոյէն մինչեւ հոկտեմբեր 27, 13 դէպք եւ հին ու նոր բռնուածներէն 6 մահ:

Հոկտեմբեր 26ին ի Կարին առաջուան բռնուածներէն 2 մահ եւ նորէն ութ վարակեալք: Ի Բաբերդ նորէն 14 վարակեալներ, իսկ մահ չէ պատահած: Խնուսի Բարմագըրդ գիւղին մէջ նոր դէպք չէ պատահած եւ առաջուան բռնուածներէ երկու մարդեր ապաքինած են:

Ի Շիրազ հնտախտը սաստկանալով 250 վարակեալներէ 120ը մեռեր են:

—Ներքին գործոց նախարարութիւնն, ըստ խնդրանաց Տրապիզոնի կուսակալութեան, մէկ քանի բժիշկներ եւս պիտի ղրկէ անդ՝ առողջապահական անմիջական միջոցներն աւելի փութով ի գործ դնելու համար:

—Առողջապահական ժողովոյ որոշմամբ Եանեայի Ավլոնիա գաւառակի Փաշա Լիմանը անուն տեղը մաքրանոց մը պիտի հաստատուի, ուր քարանթինա պիտի սպասեն Աւստրիոյ ծովեզրերէն եկող փոքր նաւերը: Կայս. Իրատէ մը հրամայուած է որ Ծովային Նախարարութեան կողմէ շոգենաւ մը ղըրկուի անդ՝ քարանթինա սպասող նաւերու վրայ հսկելու համար:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ դեսպան Ռատոլին Ռատոլինսքի իշխանը Բ. Դրան միջոցաւ արտօնութիւն խնդրած է իւր յանձնարարագրերը Վեհ. Սուլթանին մատուցանելու համար:

ԲՆԻԿՑ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ մը, զոր կը կազմեն Զինուորական Բնիկց Յանձնաժողովոյ անդամ Հասան Էտիպ փաշա, Պետական Խորհրդոյ Նախնական դատարանին ընդհանուր դատախազ Ճէմալ պէյ եւ Վերաքննիչ ատենի անդամ Համտի էֆէնտի, այս իրիկուն Գարասի պիտի ուղեւորի թէ այդ տեղի պաշտօնէից եւ թէ ասանց բողոքին վըրայ Կեօլա գաւառակի պաշտօնէից նկատմամբ քննութիւններ կատարելու համար:

Բնիկց պաշտօնէից ուղեւորութեան ծախքերը վճարուած են եւ կայս. Իրատէի մը համաձայն՝ իւրաքանչիւրն օրական մէկ մէկ ոսկի պիտի ստանան ցորչափ տեւէ իրենց պաշտօն:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ Անկելանոցին ծախքերն հոգալու համար՝ Թաղապետութեան Թ. շրջանակին տնօրէնի օգնական Եուսուֆ պէյ ծրագիր մը մատուցանելով Բարձր. Մեծ-Եպարքոսին, հասոյթի հինգ աղբիւրներ ցոյց տուած է: Եուսուֆ պէյ ադոնմէ իբրեւ հասոյթի գլխաւոր աղբիւր առաջարկած է առնուլ թէ մայրաքաղաքիս եւ թէ գաւառաց մէջ Գուրպան Պայրամի տօնին առթիւ զենեալ ոչխարաց մորթերը. ի Բեազըտխանէ, ի Զըրըբճը, ի Վէլի էֆէնտի, ի Ֆէնէր Պաղչէ եւ այլ այդ կարգի զբօսավայրերը ժողովուրդ փոխադրող կառքերէ, ձիերէ, նաւերէ ու մակոյկներէ տուրք մը առնուլ. Նոյնպէս Ռամազան ամսուն եւ այլ ատեններ թատրոններու, պարահանդէսներու, ձեռնածուներու, լարախաղացներու, եւ այլ այդ կարգի խաղերու ներկայացմանց զուտ հասոյթէն հարիւրին տասն եւ կամ որոշեալ տուրք մը առնուլ:

ՀԻՆ ԹՆԴԱՆՕԹՆԵՐ. — Ծովային Նախարարութիւնը տեղեկանալով որ ի Սեւ ծով՝ Գարապուրնի եւ Միտիսի միջեւ Բօթիմէ անուն տեղը ծովին յատակը հին թնդանօթներ կը գտնուին, սուզակներ ղրկած է անդ, որք յետ խուզարկութեան գտած են վեց թնդանօթներ, որք երկաթէ շինուած են, եւ ժանգոտած ըլլալով, վրանին ո եւ է արձանագրութիւն տեսնուած չէ: Այդ թնդանօթներ մաքրուելու համար թնդանօթարան ղրկուած են: Այդ տեղերն ուրիշ շատ մը առարկայներ եւս տեսնուած են, սակայն հարկ եղած խուզարկութիւններն ամառուան եղանակին մէջ միայն կարելի է կատարել:

Կը կարծուի թէ այդ թնդանօթներ կը վերաբերին [illegible] եւ [illegible] անուն մարտանաւերուն, որ Խրիմու պատերազմին ատեն 1854 նոյեմբեր 14ին պատահած նշանաւոր փոթորիկի պահուն Կ. Պոլիս գալու ատեն Գարապուրնի առջեւ ցամաք նետուած էին: Այդ փոթորիկի պահուն դաշնակից տէրութեանց 40 նաւերը 400 մարդերով խեղդուած էին:

Այդ մարտանաւեր Սեւաստաբոլի ռմբակոծուելու օրը բաւական վնասուած ըլլալով, Հասան փաշայի հրամանատարութեամբ բաց ծովուն մէջ կը գտնուէին: Ասոնց հետ կար նաեւ [illegible] կոչուած եռայարկ մարտանաւն, որ ծովախորշի մը մէջ ապաստանած էր:

ՍՊԱՆԻԱԿԱՆ դեսպան Պ. Ռիւալթա, որ միանգամայն Աթէնքի դեսպան անուանուած ըլլալով Աթէնք գնացած էր իւր յանձնարարագրերը մատուցանելու, երէկ մայրաքաղաքս վերադարձաւ:

ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ. — Երէկ, Յունաց Պատրիարք Ամեն. Տ. Նէօֆիթօսի ընտրութեան տարեդարձն ըլլալով, Խառն ժողովոյ անդամք, Պատրիարքարանի պաշտօնեայք եւ յոյն երեւելիք Ն. Սրբազնութեան ներկայանալով իրենց շնորհաւորութիւնները մատուցին:

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ. — Ըստ տեղեկութեանց [illegible], այս շաբթու Ալաշկերտէն Հասան գալէ գնացող թղթատարն Ալաշկերտէն մէկ քանի ժամ հեռանալուն՝ զինեալ հինգ աւազակներ թղթատարին վրայ յարձակիլ ուզեր են, սակայն ոստիկան-զինուորք արգիլեր են: Ո եւ է դէպք չէ պատահեր եւ միայն Ալաշկերտի հեռագրատան տնօրէնին ձին վիրաւորուեր է արձակուած հրացաններէն: Թղթատարին առանց վընաս մը պատճառելու աւազակներն խոյս տուեր են: Տեղական կառավարութեան կողմէ ոստիկան-զինուորներ ղրկուած են, որք ամեն կողմ խուզարկութիւններ կը կատարեն այդ աւազակները ձերբակալելու համար:

ՕՍՄԱՆԵԱՆ ՆԱՒԱՏՈՐՄ. — Կայս. Իրատէով Նիկոմիդիոյ նաւարանին մէջ շինուելիք երկու փոքր շրջուն մարտանաւերու շինութիւնն սկսած է ի ներկայութեան կայս. թիկնապահ նաւային Ֆէրիգ Շիւքրի փաշայի, Նիկոմիդիոյ կառավարիչ Սէլիմ Սըրրի փաշայի եւ այլ պաշտօնէից: Բարեմաղթութիւնք եղած են վասն կենաց Վեհ. Սուլթանին եւ ոչխարներ զենուած են:

Պ. ՍԹԱՆԻՖՈՐԹ որ կայս. կառավարութենէն արտօնութիւն կը խնդրէ երկաթուղւոյ մը շինութեան համար ի Փոքր Ասիա, երէկ առաւօտ Լոնտոնէն մայրաքաղաքս ժամանեց:

ՔԼԻՎԼԷՆՏԻ դքսուհին ուրբաթ օրը Պրուսա պիտի ուղեւորի ուր քանի մը օր մնալէ ետք մայրաքաղաքս պիտի դառնայ: Դքսուհին պիտի մեկնի յառաջիկայ շաբթու:

ԳԱԶԷՄ ՓԱՇԱՅԻ կոյուղին զօդելու համար կազմեալ յանձնաժողովին կողմէ կարգեալ մասնախումբը, զոր կը կազմեն Բերայի Թաղապետութեան առաջին երկրաչափ Իսհաք փաշա եւ Պ. Պ. Քայյարտ, Նօպլէ ու Հաքիմ, երէկ ի նիստ գումարուելով քննեց մասնագէտներու կողմէ պատրաստուած տեղեկագրերն ու քարտէզները:

Պ. ԼԱՖԻԱՆԻ, որ Հանրային Պարտուց վարչութեան մէջ Օսմ. կայս. Պանքայի ու քօնսօլիտէ արժէտարց կողմէ պատուիրակ կարգուած է, նախընթաց օրէն ձեռնարկած է իւր այդ պաշտօնին: Աւելորդ է ըսել թէ Պ. Լաֆիանդ կը պահէ միանգամայն Օսմ. կայս. Պանքայի տնօրէնին պաշտօնը:

ԱՏԱՆԱՅԷՆ մինչեւ Էրէյլի (Գօնեա) շոգեշարժ Թրամուէյ մը շինելու համար Պ. Վանտէօվը մենաշնորհ խնդրած եւ Օսմ. կայս. Պանքան եւս գրած է Հանրօգուտ շինութեանց նախարարութեան թէ այդ ծրագրոյ գործադրութեանը յատուկ դրամագլուխն ապահովուած է: Հանրօգուտ շինութեանց ժողովն նոյն նախարարութեան մասնագիտաց դիւանին յանձնած է պատրաստել հարկ եղած պայմանագիրն ու յանձնառագիրը:

ՆԱՄԱԿԱՏՈՒՆ ԵՒ ՀԵՌԱԳՐԱՏՈՒՆ. — Կայս. Իրատէ մը հրամայած է նամակատուններ եւ հեռագրատուններ հաստատել Ատանայի նահանգին Բայաս, Գարաթաշ, Եումուրթալըք, Միսիս ու Հաճըն գիւղաքաղաքաց մէջ:

ԱԶԱՏԱՐԱՐԻ շքանշան տրուած է Մաքրիգիւղի կայարանին պետ Զօպանեան էֆէնտիին որ իւր անձը վտանգի ենթարկելով փրկած էր ծովային սպայ մը որ մազ մնացած էր վայրաշարժին տակ մնար:

ԹՈՐՓԻՏՕ. — Կայս. կառավարութեան հաշւոյն ի Գերմանիա շինուած թօրփիտօն Պոլսոյ նաւահանգիստը ժամանեց:

ՊԱՀԱՐԱՆՏ. — Գասըմփաշայի Պօյալըգա գաւառակին մէջ պահարանտ ծագած եւ սաստկապէս ճարակած ըլլալով, անասնաբոյժ մը պիտի ղրկուի անդ հարկ եղած առողջապահական միջոցներն ի գործ դնելու համար:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ վերատեսչութեան որոշմամբ՝ հեռագրական ընդծովեայ թել մը պիտի հաստատուի Ափրիկեան Տրիպոլսոյ եւ Կրէտէի միջեւ: Երէկ Բերայի հեռագրատան մէջ յանձնաժողով մը ի նիստ գումարուելով խորհրդակցութիւններ կատարեց այդ խնդրոյն վրայ:

ԱՐԿԱԾՔ. — Անցեալ օր ի Սեւ ծով Միտիսի մօտ ածուխ բեռցած փոքր առագաստանաւ մը ցամաք խըռելով խորտակուեր է, սակայն նաւաստիներն ազատուեր են:

—Պալըգլը Հաւուզի սենեկապահ Անդրանիկ չաբաթ օրը վերելակով շէնքին վերի յարկէն վար իջնելու պահուն, վերելակին շղթային որ փտած էր, կոտրելով՝ Անդրանիկ գետին ինկաւ ու մէկ քանի տեղերէ ծանրապէս վիրաւորուեցաւ: Թէեւ բժիշկ բերուելով անմիջական դարմանները տրուեցան, սակայն օգուտ մը չընելով խեղճ մարդը քիչ յետոյ մեռաւ:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ամենագեղեցիկ եւ խիստ ամուր ակռայներ դնել, առանց քիմքի, առանց զսպանակի եւ առանց արմատներն հանելու. արտասանում եւ ծամողութիւն կատարեալ. ապահով յաջողութիւն երկու դարմանումով:

Կատարեալ գոհունակութենէ ետք վըճարում. Տոքթ. Պառի, Թիւ 374, Բերա, Մեծ փողոց, ֆրանսական դեսպանատան դիմացը, ամեն օր ցորեկուան ժամ 9էն (Ը. Ե.) մինչեւ իրիկուան 5ը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ շոգենաւ մը անցեալները Գավագի առջեւ երկաթ նետած պահուն հեռագրական ընդծովեայ թելը խորտակած էր: Կատարուած քննութեամբ հաստատուած է թէ խզուած եւ ծովին յատակը մնացած թելին երկայնութիւնն է 1500 մեթր, սակայն հազիւ 300 մեթրը գտնուած եւ մնացեալ մասն ալ հոսանքներէն քշուելով անյայտ եղած է: Հեռագրական վերատեսչութիւնը դատ բացած է այդ շոգենաւին պատկանած ընկերութեանը դէմ, որ այդ հաշւով բաւական վնաս մը պիտի հատուցանէ:

ՀԵՌԱԳԻՐ
ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՓԷՇԹԱ, 8 Նոյմ. — Ֆրանծ Եօզէֆ թագաւոր կայսր ընդունեց Հունգարիոյ վարչապետ Սաբարի կոմսի հրաժարականը: (Տե՛ս այս աւուր Ա. երեսին մէջ:) Հրաժարեալ նախարարութիւնն առժամապէս պիտի վարէ գործերը: Կոմսն յայտարարեց թէ նոր վարչութիւն մը կազմելու պաշտօն պիտի չընդունի: Վեհապետն իւր մօտ կանչեց նախկին վարչապետ Պ. Թիսա եւ կոմս Թէօտոր Անտրաշի:

—Երէկ ի Փէշթա 15 վար. 4 մեռեալ հնտախտէ:

ՀՌՈՄ. — Իտալիոյ Երեսփ. Ժողովոյ ընտրութիւնք Պ. Ճոլիդդիի նախարարութեան համար մեծ յաջողութեամբ մը վերջացան: 508 երեսփոխաններէն 505ն ընտրեցան, 325 նախարարականք եւ 101 արմատականք կամ Նիքոդէրայի կուսակից: 16 անստոյգ, 61 համեմատական: Լրագիրք կը հաստատեն նախարարութեան յաջողութիւնն: Հակա-նախարարական աջակողմը բոլորովին յաղթուեցաւ եւ ծայրայեղ արմատականք մեծապէս պակսեցան:

ՓԱՐԻԶ. — Սոսիէտէ տէ Տէփօ է Քօնդ Քուռան նախկին դրամատան տնօրէն Պ. Տոնոն եւ խորհրդականք Կոթիէ եւ Բուազոն դատի պիտի ներկայանան վստահութեան չարաչար գործածման ամբաստանութեամբ, ըստ հարցաքննիչ դատաւորի եզրակացութեան:

—Ֆիկառօ կ'ըսէ թէ Պապը Սէրգէյ մեծ-դքսին միջոցաւ շնորհակալութիւն յայտներ է Զարին՝ Վատիկանի հետ կանոնաւոր յարաբերութեանց սկսման առթիւ, եւ յայտարարեր է թէ ինք բնաւ միտքէն չանցուներ ռուս Եկեղեցւոյ իրաւանց դպչիլ:

ՊՐՈՒՔՍԷԼ. — Պելճիոյ Երեսփ. Ժողովը բացուեցաւ: Թագաւորը ծանոյց թէ Սահմանադրութեան վերաքննութիւնը գլխաւոր գործ պիտի ըլլայ ժողովոյն, եւ թէ օտար Տէրութեանց հետ յարաբերութիւնք բարեկամական են:

ԱԹԷՆՔ. — Զարեւիչը մեկնեցաւ Պարիի ճամբով: Ի Վիեննա կայսերական գերդաստանին պիտի այցելէ:

Սակարան

ՂԱԼԱԹԻԱ, 28 Հոկտեմբեր

ԸՆԹԱՑԻԿ ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐՔ

3 ամիս Լոնտրայի վրայ		110
3 » Փարիզի »		22 75

ՕՍՄԱՆԵԱՆ ՔՈՆՍՕԼԻՏԷ

Երէկ երեկոյ զոց. [Միաց. Դ. Սէրի]		23 34¼
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	23 32
Կէս օրին	»	23 35
Թանզիմաթը Օսմանեան երէկ երեկոյ		— —
» ժամ 5ին		— —

ԸՆԹԱՑԻԿ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Փոխառութիւն	Ա. Սէրի	54 ¾
»	Բ. »	30 ¼
»	Գ. »	23 34

ԲԱԺՆԵՏՈՄՍԻ

Ասիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.	5 10
Քրէտի Ժէնէրալ	»	8 02
Պանք տը Բօնս	»	4 38
Յօս. Շանծ է վալէօր	»	4 22
Րէժի	»	16 13
Թրամուէյ	»	602 ½
Ռումէլիի երկաթուղի	ֆր.	92 ½
Բաժնեթուղթ Լաւրիոնի		85

ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանքնոց	»	87 37
Անգլիական ոսկի	»	110 18
Մարք Գերմանական ոսկի	»	107 20
Իմբէրիալ	»	90
Ֆլորին	»	51 20
Ռուպլ Թղթադրամ	»	9 16
Մէճ. արծաթ [տարբ.]	»	106 32
Մանր արծաթ	»	103
Մէթալիք	»	98 20
Թասֆիյէ		— —
Տոկոս Ղալաթիոյ Սակարանի		6

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 8 Նոյեմբեր

Ֆրանսական Ռանթ 3 %	99 32½
» » 4 ½ %	105 27½
Օսմանեան քոնսօլիտէ Սէրի Դ.	21 87½
Օսմ. մաքս. արժեթուղթ	470 62½
Բրիօրիթէ Թիւրք (1890)	427 50
Օսմանեան երկաթուղի	92 50
» Րէժիի բաժնեթուղթ	368 75
Պանք Օթօման	596 25
Քրէտի Լիօնէ	782 50
Իտալական Ռանթ 5 %	92 65
Եգիպտական միացեալ	495
Չէք Լոնտրայի վրայ	25 16
Օսմանիյէ Օսմանեան քոնսօլիտէ)	375

ԼՈՆՏՈՆ, 8

Անգլ. քոնսօլիտէ	97 31
Օսմ. » Սէրի Դ.	21 62
» » » Ա.	54 ¾
» » » Բ.	30 ¼
» » » Գ.	22 ¼
Օսմ. փոխառութիւն 1871	96 ¼
Փոխառութիւն 1877 (Տէֆանս Լօն)	93
Պանք Օթօման	13 ¾
Այտընի երկաթուղի	20
Դասապայի երկաթուղի	12 ½
Եգիպտական միացեալ (ինիֆիյէ)	98 ⅛
» առանձ. (բրիվիլէժիէ) 1890	103
Ցօմանիալ (փոխառ. Ռոչիլտ)	105
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 362

ՎԻԵՆՆԱ, 8

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	120 10
» Փարիզի »	47 65
Օսմանեան Րէժիի բաժնեթուղթ	173
» Երկաթուղի	45 90

ՊԵՐԼԻՆ, 8

Օսմանեան Երկաթուղի	92 60
Օսմ. Րէժի	194 50
Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 245
» Փարիզի »	80 60

ԲԱՐԻԶ ՔԹԻԹ ՊՈՒՐՍ

ԲԱՐԻԶ, 8

Ֆրանսական Ռանթ 3 %	99 25
Եգիպտական միացեալ	495
Օսմ. քոնսօլիտէ Սէրի Դ.	22 71¼
Օսմ. երկաթուղի	92 25
Օսմ. Ռէժի	367 50
Օսմ. մաքս. արժեթուղթ	471 25
Բրիօրիթէ Թիւրք	426 25
Պանք Օթօման	595 25
Օսմանիյէ	— —

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷ

ՊԱՖԸԼՕ ՔԱՂԱՔԸ ԵՒ ՆԻԱԿԱՐԱՅԻ ՋՐՎԷԺՔ. — ՕԴԱԿԱԽ ԿԱՄՈՒՐՋԸ — ՋՐԻ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՒ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ. — ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԵԾ ԹՈՒՆԷԼ ՄԸ:

Շիքակօ 16 հոկտեմբեր

Միացեալ-Նահանգաց մէջ Նիւ-Եորքի նահանգը բարգաւաճ եւ հարուստ երկիր մ'է, եւ իր մէջ Նիւ-Եորքի, Ալպանի, Պաֆլօի եւ ասոնց նման ուրիշ յառաջացեալ քաղաքներ կան: Պաֆլօ քաղաքը՝ Նիւ-Եորք նահանգի գլխաւոր եւ վաճառաշահ քաղաքներէն մին է 287 հազար բնակչօք. Նիւ-Եորքէն 410 մղոն եւ Շիքակոյէն ալ 536 մղոն հեռու է: Անկից Նիակարայի ջրվէժները երթալու համար քսան երկու մղոն երկաթուղիով կարճ եւ գեղեցիկ ճամբորդութիւն մը ընել պէտք է: Քաղաքին մեծ մասը սալարկուած է. ամերիկեան քաղաքաց մէջ ամենէն մաքուր քաղաքը Ուաշինկթընն է, Միացեալ Նահանգաց մայրաքաղաքը. վերջը կուգայ Պաֆլօ, սա առաւելութեամբ որ այս վերջինը անիկէ աւելի ասֆալթով սալարկուած փողոցներ ունի. քարով սալարկուած փողոցներն 133 մղոն՝ իսկ ասֆալթով սալարկուածներն 136 մղոն, որ այս հաշւով Բարիզէն ալ աւելի ասֆալթով փողոցներ կ'ունենայ: Ահա, դեռ բնակչաց թիւը երեք հարիւր հազարի չը հասած, ամերիկեան քաղաքի մը առաւելութիւնը. մէկ կողմէն ալ շինելու վրայ են. գիւղերն ճամբան գտած են կարծեմ. գործաւորներու բազմութիւն մը փողոցները քիչ մը փորելէն եւ շտկելէն վերջ՝ սեւ տաք փոշի մը (ասֆալթ) կը լեցնեն հոն եւ ծանր ու հարթիչ ինքնաշարժ մեքենաներ կ'սկսին գործել. մէկ երկու վայրկեան վերջ փողոցները շինուած են. այն սեւ փոշին քարի նման կարծրացած է եւ վրայէն կառքեր կ'սկսին երթեւեկել դարձեալ: Գեղեցիկ պողոտաներ եւ ծառուղիներ կան, ինչպէս նաեւ մեծ ու զարդարուն հանրային պարտէզներ 638 ակրօն տարածութեամբ, եւ ուրիշ զբօսավայրեր. քաղաքին գերեզմանատունը շատ գեղեցիկ է. հոյակերտ մահարձաններ կանգնուած կան, ոմանք պզտիկ տաճարներու ձեւով, ծառերով հովանաւորուած եւ գեղեցիկ ծաղկանց ածուներով լի, այնպէս որ ներս մտած պահուդ կարծես ապարանքի մը պարտէզն է որ կ'այցելես, սիրուն եւ մաքուր ճամբաներով եւ աւազոտ նստարաններով. ասանկ գերեզմանատուններ տեսած պահուդ՝ մարդուս միտքը կ'իյնայ Պոլսոյ մեր խեղճուկ գերեզմանատուները՝ փլած եւ թափթփած պատերով: Քաղաքին գրատունը նոր շինուած նշանաւոր եւ ընդարձակ շէնք մ'է կարմրագոյն աղիւսով, այս շէնքին մէջ են նաեւ բնական գիտութեանց եւ գեղարուեստից թանգարանները. փողոցները ելեքտրաշարժ կառքեր կը բանին ամեն կողմ. մեծ շուկաներ կան, տասը թատրոններ, 48 հասարակաց դպրոցներ, 155 եկեղեցիներ որոցմէ հինգը սինակոկ են. արհեստական հինգ հազար հաստատութիւն ունի եւ ցորենի ու հանքածուխի արտադրութեանց մեծ կեդրոն մ'է. Երկաթի ամենամեծ ձեռագործութեանց կեդրոններէն մին է. երկրի վրայ ամենէն մեծ տպագրական մեքենան (quadreplex) որ մէկ ժամուան մէջ 60,000 թերթ կը տպէ եւ կը ծալլէ, այս քաղաքին մէջ կը գտնուի:

Շիքակոյէն Պաֆլօ երթալը շատ գեղեցիկ ճամբորդութիւն մ'է, երբեմն անտառներէ, երբեմն դաշտերէ, երբեմն պարտէզներէ անցնելով. չորս կողմը սեւ խաղողի որթերով այգիներ, պըտուղներով բեռնաւորուած ծառեր կ'երեւին. լեռներ չկան այս տեղուանքը. ընդարձակ եւ տափակ դաշտեր շատ են. մէջ մը կը տեսնես անտառներ որոնց կէսը այրած եւ ոմանք դեռ կը մխան. երբեմն լճին կապոյտ մակերեւոյթը կը տեսնես, եւ երբեմն գետի մը վրայէն կ'անցնիս. մերթ այնպիսի բարձր տեղերէ կանցնի կառքը, որ վար նայիլ անգամ մարդուս սոսկում կը պատճառէ. երբ կառքը յանկարծ կը յամրացնէ իր ընթացքը, կ'րնաս մակաբերել թէ վտանգաւոր տեղէ մը անցնիլ ստիպուած է. ակնարկ մը պատուհանէն դուրս կը նետես, ու երկու ժայռերու գագաթը, կամ խորունկ ձորի մը վրայի կամուրջէն անցնիլդ կը տեսնես: Եւ այդ բարձրէն ի՜նչ գեղեցիկ կ'երեւայ ձորերու մէջէն սահող գետակներու ընթացքը. եւ ի՜նչ գեղեցիկ, այն սեպացեալ ժայռերուն տեսքը, որոնց վրայէն երբեմն ջրվէժի նման ջրերու հեղեղներ վար կը թափին. հապա այն տեղ տեղ երեւցած կանանչներու տեսարանը՝ գմայլելի. ձեռքիդ թերթը կամ վէպը վար ձգել կ'ուտան եւ աչքերդ դուրս սեւեռած նոր անակնկալի մը կ'սպասես, կը պատահի որ մտքիդ մէջ այն բարձրէն կամուրջին խորտակմամբ կառախումբի մը վար իյնալը եւ ճամբորդներուն երկաթներու տակ ջախջախուիլը երեւակայես. Այս տեսարան ամենէն աւելի գեղեցիկ է, երկաթուղիով ճամբորդութեան մէջ: Ասոնք բոլորն ալ կառքէն դուրս եղածներն են, ներսի տեսարաններն ալ բաւական գրաւիչ են, ոմանք ընտանեօք կը ճամբորդեն. իր քովիկը կինը եւ տղաքը նստած, կը խօսին կը խնդան, կը զուարճանան, ճաշի ատեն մասնաւոր կառքը կ'անցնին ճաշելու. ոմանց քով ալ սիրուն դէմքերով, հրապուրիչ արարածներ նըստած են, անոնք ալ մէկզմէկ գտած են, մեղմաբար կը խօսակցին, ասոնց վիճակն ալ մխիթարական է, ոմանք առանձին են, վէպ կարդալէն ձանձրացած ընկեր կը փնտռեն. ճամբորդութեան միջոցին ամեն մարդ կարծես մտերիմ բարեկամներ են, օտարութիւն չկայ ճամբորդութեան մէջ, ամեն ոք կը փափաքի խօսիլ, խօսակցիլ մէկուն հետ, յանկարծ քովի կամ դիմացի աթոռին բան մը կը հարցնէ, ըսել կ'ուզեմ որ ընկեր գտնելը դիւրին է եթէ քիչ մը քաղաքավարական ձեւեր գործածես, զի հազարներով աղջիկներ առանձին կը ճամբորդեն հոս:

Քիչ շատ երկար ճամբորդութեան մը միջոցին ամենէն աւելի աչքի զարնող բանը օդի եւ կլիմայի փոփոխութիւնն է. տեղ մը անձրեւ, տեղ մը պայծառ օդ, քիչ մը աւելի յառաջանալով՝ ամպամած երկինք մը մէկ դըմկու կը յաջորդէն, կառքը կ'անցնի նաեւ մի քանի նահանգներէ, նախ Իլլինօյզ նահանգէն կանցնիս Օհայօ նահանգը և հեռուէն կամուրջներու եւ գործարաններու խառնաշփոթութիւն մը կը նշմարես, ծխնելոյզներու չատութենէն և մուխով պատած երկինքէ մը կրնաս դիւրաւ մակաբերել թէ մեծ քաղքի մը մօտն ես։ Ահա Փիլըլէնտա քաղաքը որ նշանաւոր է, և Օհայօ նահանգի կեդրոնատեղին. Եթէ կեդրոնական Միչիկըն երկաթուղիի ճամբով գացած ըլլաս, որ աւելի կարճ է, ճամբան կը հանդիպիս Տիթրոյթ քաղաքին որ նմանապէս Միչիկան նահանգին կեդրոնատեղին է և Շիքակոյէն 286 մղոն հեռու։

Կը փափաքէի քիչ մը աւելի տեղեկութիւն տալ Ամերիկեան քաղաքաց վրայ որ կրնայ չահեկան ըլլալ, բայց թէ ժամանակի և թէ Աբէ-Վէլի էջերուն սղութիւնը կ'ստիպեն զիս կարելի եղածին չափ համառօտել։ — Գանք այժմ բնութեան այն մեծ հրաշալիքին՝ Նիակարայի ջրվէժներուն։ Հ. Ա.

(Մնացեալը յաջորդ թուով)

ԿԱՒԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

(ԹԻՖԼԻԶԻ ԹԵՐԹԵՐԷՆ ՔԱՂՈՒԱԾ)

Հոկտեմբեր 10 ին կէսօրից յետոյ ժամը 2-ին արտաքոյ կարգի գնացքով Թիֆլիզ ժամանեցին Կովկասեան Նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեւիչ՝ իւր չորս Մեծ Իշխան որդիերանցով։ Երկաթուղու կայարանում արքունական դահլիճներում չնորհ աւելին Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեւիչը իր որդիերանցով, փայլուն թիկնապահներով, ընդունել թէյ, և մի կէս ժամ մնալով այստեղ ու սիրալիր զրոյց անելով Թիֆլիզի իշխան քաղաքապետի և քաղաքի միւս ներկայացուցիչների հետ, որոնք եկել էին դիմաւորելու իրանց անմոռանալի և սիրելի փոխարքային, Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաեւիչը իր Նիկոլայ Մեծ Իշխան որդու հետ ուղղակի նոյն գնացքով ուղի ընկնել բարեհաճեց Բորժոմ, իսկ Մեծ Իշխաններ Գէորգ, Ալեքսանդր և Սերգէյ Միխայլովիչները բարեհաճեցին քաղաք մտնել և իջեւանել Պ. կառավարչապետի պալատում, ուր երկու օր կը մնան քաղաքումս։

Նոյն գնացքով քաղաքս ժամանեց երկրիս կառավարչապետ գեներալ ադիւտանտ Շերեմետեւ։

Մեծ Իշխանները վերադառնում էին Ղարայաղից, ուր գնացել էին որսի երկրիս Պ. կառավարչապետի եւ ուրիշ բարձրաստիճան անձինքների հետ։

Թէ Պալատի առաջ եւ թէ Բարեատինսկի փողոցն ու Գոլովինսկի Պրօսպեկտը լիքն էին մեծ բազմութիւնով, որոնք հաւաքուել էին դիմաւորելու Մեծ Իշխաններին և Պ. կառավարչապետին։

—Ներկայումս խոլերային համաճարակի ընթացքն ու բնաւորութիւնը ուսումնասիրող յանձնաժողովի անդամներից երկու հոգի՝ քաղաքային բժիշկներ Պ. Տ. Էնֆիաջեանց և բժ. Սախվիաձեանց կազմել են չատ հետաքրքիր և գեղեցիկ մի քարտէզ, ուր քաղաքիս խոլերային հիւանդութեան դէպքերը, ընթացքն ու վախճանը չատ մանրամասն ցոյց են տրուած։

—Թիֆլիզի Քաղաքային վարկի Ընկերութեան վարչութեան անդամներից մի հոգի՝ 30,000 ր. փող է կորցել կրկին անգամ կարօններ ներկայանելով բանկի Անուցին։ Հասարակաց կարծիքը վրդովմունքի մէջ է և ընկերութեան կառավարիչը, որ իշխան Ն. Ա. Ամատունին է, օրերս ընդհանուր ժողով պիտի կազմէ ընդհանուրի տարակուսանքը փարատելու համար։

—Ղզլարից գրում են, որ Լալի գիւղի հանդում՝ Կարմիր քարի առաջ, հրաշալի անտառաշարք հովտում նորերումս հանքային ջուր է գտնուել, որը դեղին գոյն ունի, խմելիս քացցր է թւում, իսկ մի քիչ յետոյ թեթեւ թթուութիւն է տալիս։ Ստամոքսային ցաւերին կարճ ժամանակում վերջ է դնում այդ ջուրը, նրա մէջ լողացողը չատ զուարթանում է։ Գիւղացիք ուրախութեամբ գործ են ածում նրան։ Քիմիագէտների ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ ջրի վրայ։

—Թեհրանից գրում են, որ այնտեղ խոլերան նուազել է, օրական մեռնում են 2-3 հոգի։ Մինչեւ այժմ մեռնողների թիւը համնում է 40 հազար հոգու։

—Ռուսիայում գտնուած բոլոր բաժնեգործական ընկերութիւնները պարտաւորուած են ամեն տարի իրենց գործունէութեան մասին հաշիւ ներկայացնել բացի ներքին գործերի մինիստրութիւնից, նաեւ արտաքին գործերի մինիստրութեան ներքին հաղորդակցութիւնների դեպարտամենտին։

—Հոկտեմբերի 5 ին փակուեց ձիերի ցուցահանդէսը, ուր ի ցոյց դրած ձիերը վաճառուեցին աճուրդով, նախապէս հանելով նրանից լուսանկարը։

—Ներքին գործերի մինիստրութեան պահանջի հիման վրա, տեղական իշխանութիւնը պատրաստում է այն անձանց անուանացուցակը, որոնք թէ կովկասում և թէ մասնաւորապէս Թիֆլիսում մասնակցել են խոլերայի դէմ մղած կռուի մէջ։

—Գանձակից. «Հոկտեմբերի 2ին մեր նահապետական քաղաքի համար մի բոլորովին նոր երեւոյթ տեղի ունեցաւ. Ս. Յովհաննէս եկեղեցու բակում կէս գիշերին ժամկոչը մի նորածին մանուկ գտաւ, որ ծծմոր է յանձնուած։

—Բագուից գրում են. «Մեզ մօտ եղանակն այժմ լաւ է և չորային, բայց այս վերջին օրերս նորից խոլերայի մի քանի դէպքեր են պատահել. Ասում են դրա պատճառն այն է, որ Ռուսաստանից եկող բանւորները մտնում են քաղաք, առանց որ և է դեզինֆեկցիայի ենթարկվելու, և իրանք վարակված լինելով, վարակում են եւ ուրիշներին։»

ԱՐՁԱԳԱՆԳ

ՉՈՒԽԱՃԵԱՆ

ՊԵՐԱ, 27 Հոկտ.

Շիքակոյէն, «Արեւելք»ի Թղթակիցն հրաւէր կը կարդայ Չուխաճեանին՝ Գոլոմպեան ցուցահանդէսին երթալ, ինչպէս կ'երթան աշխարհի ամեն կողմերէն ու ամեն ազգէ արուեստագէտներ։ Եթէ «Մասիս»ի Տնօրէնին անուանակից ու մականունակից այդ տարաբախտ բարեկամը գիտնար թէ հայ երաժշտապետը զուրկ կը գտնուի ո՛չ միայն այսպիսի մեծ տեղափոխութիւն մը կատարելու դիւրութիւններէն, այլ եւ աւելին իսկ, ի՛նչ տխուր մտածում պիտի ունենար։ Եւ իրեն հետ նոյն ցաւը չ'զգա՞ր կրեն մեր բոլոր արուեստասէրներն ու երաժշտասէրներն, երբ իմանան թէ ի Բարիզ կատարած ուղեւորութիւնը նոյնքան ալ ո՛րքա՛ն վնասաբեր հետեւանք ունեցաւ «Զէմիրէ»ի հեղինակին համար. անոնք որ կը չատանան պզտիկ շրջանակի մը մէջ փայլեցնել իրենց տաղանդն ու անկից անդին չեն տեսներ, չըմբռնեցին թէ ուրիշ մը ինչպէ՞ս կը յանդգնի այդպիսի մեծ փորձ մը կատարել։ Յաջողութիւնը տարակուսական էր արդէն, Չուխաճեան գիտէր այդ բանը. բայց ինք ուզեց անձամբ ստուգել թէ իրա՞ւ արդեօք, ֆրանսական ոստանին մէջ, անկարելին կը կանգնի արեւելքցի անծանօթ հեղինակին դէմ. իր փորձին կէսն հազիւ հասած՝ հիւանդ դարձաւ Պոլիս։ Իր բացակայութիւնը նպաստած էր ոմանց՝ սահելու այն աթոռակներուն վրայ յորս վարժած էր նստիլ վարպետը՝ իր աշակերտ դասերը տալու. Նորեկներ, նորուսներ, կարգ մըն ալ օտար դաշնակահարուհիներ հետզհետէ կողոպտեց հրապարակը, և վարպետը կը մնայ ձեռքերը ծալլած։ Իրեն համար, վերջին ձախորդութիւնը կայացաւ այն լուրին մէջ, թէ ինքը Կովկաս կ'երթայ ու բնականաբար չպիտի դասախօսէ այլ եւս։ Ո՛չ, Չուխաճեան չերթար, հոս է ու հոս կը մնայ. ամեն ատենէ աւելի յօժարափոյթ է իր դասերը չարունակելու, և գիտենք թէ Չուխաճեանի պէս վարժապետ մը ունենալը ի՛նչ մեծ բաղդ է աշակերտի մը համար։

Իբրեւ սիրող և յարգող իր տաղանդին, այս փոքրիկ զեկոյցն ընել ի դէպ համարեցինք, գիտնալով թէ ինք՝ իբր մեր այսօրուան առաջին երաժշտապետ և իբրեւ հանրային մարդ՝ պէտք չէ վիրաւորուի հրապարակագրի այս անզգուշապատութենէն։ Ցաւալին հո՛ն է որ այսքան տարուան աշխատաւոր մը, որ արուեստագիտական հոյակապ գործեր ունի իր ետին ու անընդհատ կ'արտադրէ, նորահասի մը պէս քաջալերութեան կը կարօտի այսօր։

Բայց ամեն ճշմարիտ բանաստեղծի պէս, ինքն ալ տրտմութեան ու լքման վայրկեաններու մէջ սփոփանք փնտռեց իր քնարին, —դաշնակին,— ապաստանած։ «Զէմիրէ»ն յուրջ օբերայի վերածելու համար՝ Ֆէրիտիւյեի մէկ անկիւնն, իր մուզուած արուեստագէտի բնակարանին մէջ երկար ամիսներ աշխատելէ յետոյ, չունչ առնելու պէտք կ'զգայ ու Գնալըի գեղածիծաղ ափունքը կ'երթայ ներշնչում ու կազդուրում փնտռելու։ Հոն բարեկամներ կը շրջապատեն զինքն եւ գիշեր մըն ալ կ'առաջարկեն իրեն՝ նորաչէն փոքրիկ թատրոնին համեստ նուագախումբը վարել. իր երաժշտական առաջին փորձերն ու արուեստագիտական կեանքի պատանեկութիւնը միտքը կուգան և ահա նուագախմբին գլուխն անցած է Չուխաճեան երիտասարդական աւիւնով մը, ու եղանակներուն կ'առաջնորդէ այն գուրգուրանքով որով առաջնորդած էր երբեմն իր մեծ հեղինակութիւններուն։ Ա՛հ, մտերմական շրջանակի մը համակրանաց արտայայտութիւնն ի՛նչ անոյշ կը հնչէ. կայ ժամանակ որ չատ աւելի ազդեցիկ է քան օտար հանդիսականներու որոտնդոստ ծափերն որոց մէջ ամբոխի զառածումին պէս բան մը կայ։ Այն քանի մը օրերու միջոցին զորս Չուխաճեան կ'անցունէ այդ բանաստեղծական կղզեակին մէջ, արտադրելու պէտք մը կզգայ. իր չուրջը՝ պար, երգ, ցնծուն երիտասարդութիւն մը, պահ մը մոռցունել կուտան իր դառնութիւնները, և ահա ափ յափոյ կը հեղինակէ սիրուն բօլքա մը զոր կղզւոյն անուան կը նուիրէն իսկոյն, ԲՈԼՔԱ ԲՌՕԹԻ։ Այլ որքան ալ իբր ժամանց կամ զբօսանք գրուած, այդ եղանակին մէջ երաժշտապետը խառնած էր մաս մը իր արուեստագէտի ներշնչումէն, իր տաղանդէն. պէտք չէր որ աչնան առաջին հովերը առնէին տանէին զայն կղզիին ափունքներէն, օդին մէջ ցրուելու։ Նկարիչ մը Գնալըի պատկերը կը գծէ ու ձայնատետրին հետ մէկտեղ կը դրկեն Լայբցիկ։ Քիչ օրէն, կը ստանանք Բօլքա Բռօթին՝ ճոխ տետրերու վրայ փորագրուած։ Եւ ձմեռը, հայ սրահներու մէջ, ուր անչուշտ պիտի նուագեն զայն, երբ անոր զուարթ եղանակներն հնչեն մեր ականջին ու ցնծայ տան մեր սրտին, նոր խանդով մը յիշենք Չուխաճեանը։

* * *

ՇՈՒՇԻ

Ճրագը չեն վառել դնել ծածուկ տեղ՝ այլ կը դնեն բարձր աշտանակի վրայ, որ բոլորին էլ լոյս տայ։

ՄԱՏԹԷՈՍ ԱՒԵՏԱՐԱՆԻՉ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՍԱՐՈՒՇԷՆ ԳԻՒՂԻ «ԱՅՎԱԶԵԱՆ» ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

ՇՈՒՇԻ, Հոկտ. 4ին 1892

Ձեզ եմ առնում գրիչը, «Արեւելք» օրաթերթի ընթերցողներին յայտնելու այն բարեգործին, որը առաջին անգամն ենք տեսնում ամբողջ Արցախի թեմումը, որ հազուագիւտ է մեզ Շուշեցիներիս համար, և միեւնոյն ժամանակ օրինակելի։

Սարուշէն գիւղը գտնւում է Շուշի քաղաքից 25 վերստ հեռու, և այդ գիւղի եկեղեցումն է գտնւում Ս. Գրիգոր Լուսաւորչու՝ Արիստակէս որդու ձեռով գրած հրաշագործ աւետարանը, որտեղ ամեն տարի Ղարաբաղի ամեն գիւղարայքից գալիս են ուխտ այդ հրաշագործ աւետարանին։ Բացի այդ՝ օտար քաղաքներից ևս գալիս են ուխտ այդ հրաշագործ աւետարանին։ Ինչպէս բոլորը, նոյնպէս էլ մեծ բարեգործ Գրիգոր Թոմասեան Այվազեանը ուխտաւոր է լինում այդ հրաշագործ Աւետարանին։

Մեծ բարեգործ Գրիգոր Թոմասեան Այվազեանը, 1858 թուականին, 23 տարեկան հասակում գալիս է Սարուշէն գիւղի հրաշագործ Աւետարանին ուխտ. եւ այդ տեղ լսում է, որ Ամարասի վանքումը գտնուել է Ս. Գրիգոր Լուսաւորչու թոռան Ս. Գրիգորիսի մասունք, որ տեղ գտնուում է լինում Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեանը, Ս. Մասունքը գտնելուց յետոյ՝ որ ամփոփի իւր ձեռօքը։ Մեծ Բարեգործ Գրիգոր Թոմասեան Այվազեանը երբ որ լսում է Ս. Գրիգորիսի մասունքը գտնուել է և այնտեղ է Գէորգ արք-եպիսկոպոս Վեհապետեանը, իսկոյն ձի է հեծնում գնում Ամարաս հասնում այն րոպէին որ ուզում էին լինում մասունքը ծածկել. երկրպագում է Ս. Մասունքին, մի օր մնալով վանքում, էլի վերադառնում է Սարուշէն գիւղը։

Երբ որ ճանապարհւում է դէպի Սարուշէն, ճանապարհին պատահում է հայ փոքրիկ տաւարածներին, որ տեղ հորթերին և տաւարներին արածացնում են լինում։ Մեծ բարերար Գ. Թ. Այվազեանը տեսնելով այդ տաւարածների տոհմային տիպը՝ վառվռուն աչքերը և գանգրաւոր մազերը, սկսում է հարցնել դրանց թէ՝ ինչո՞ւ չեն կարդում, ինչո՞ւ են տաւար արածացնում. Նրանք պատասխանում են, որ ինչո՞վ կարդան քանի որ աղքատ ծնողաց զաւակներ են, միջոցներ չունեն ուսման վարձ տալու, որ կարողանան գրել կարդալ սովորեն։ Այդ պատասխանը իրաւացի գտնելով, Պ. Գ. Թ. Այվազեանը, մի ժամից աւելի խօսում է տաւարածների հետ և ուխտում է Աստուծուն, որ այնքան կարողութիւն տայ, Սարուշէն գիւղում մի դպրոց հիմնի իւր սեպհական ծախքով, այդտեղ սովորեն Սարուշէնցիք և շրջակայ գիւղացիք։ Այդպէս էլ իւր ուխտը կատարում է։ 1885 թուին գալիս է ուխտ, եկեղեցին նորոգում է, տանիքը թիթեղով ծածկում է, վրան փոքրիկ կաթողիկէ է կանգնեցնում. եկեղեցու ներսը դուրսը զարդարում. և միեւնոյն ժամանակ մի տուն է վարձում 28 աշակերտներ ժողովում. ուսուցիչ է հրաւիրում Շուշեցի Աղեքսանդր Յովհաննէսեան անունով մէկ երիտասարդի տարեկան 300 րուբլի ռոճիկով։ Այդ տարին էլ ձեռնարկում է դպրոցի չինութեանը, որտեղ հիմքը աւազի վրայ դրած լինելով, քանդւում է 1800 րուբլի մսխելով, նորից չինել է տալիս հոյակապ դպրոց, որ վերջանում է 1887 թուին։

Դպրոցի չինութիւնը երկյարկանի է. բացի դասարաններից, արեւելեան կողմը ունի երկու սենեակ, մէկը մատենադարանի համար, միւսը՝ ուսուցչի. իսկ արեւմտեան կողմը էլի երկու սենեակ վարժուհու համար. մի մեծ դահլիճ հանդիսի համար, որի երկարութիւնը վեցից աւելի սաժէն է. իսկ լայնութիւնը 2½ սաժէնից աւելի։ Մեծ մեծ գեղեցիկ լուսամուտներով։ Դպրոցի ներքին յարկին, բացի գիշերօթիկ աշակերտների սենեակներից, ունի մի վերակացուի սենեակ, մի խոհանոց, մի ախոռ։ Դպրոցի չինութիւնը ունի երկու պատշգամբ, որը մէկը նայում է դէպի եկեղեցու բակը. միւսը՝ դէպի Շուշի, որ կարծես թէ Շուշին գտնւում է առաջնից և 25 վերստ հեռաւորութիւն չունի։ Դպրոցը շրջապատուած է գեղեցիկ ծառերով, ըստ մեծի մասին պտղատու տանձենի, ընկուզենի եւ այլ պտղատու ծառեր, մեծ ու ընդարձակ լայն բակը, որտեղ աշակերտները մարմնամարզութիւն են սովորում։

Մի քանի տարի Պ. Աղեքսանդր Յովհաննէսեան չարունակելով իւր պարապմունքը բացի տարեկան երեք հարիւր րուբլուց ստանում է, փայտ վառելիք և այլ պիտոյքներ. իւր թոյլ բնաւորութեան չընորհքին, որ ոչինչ աշակերտներին սովորեցրած չի լինում, արձակւում է, նրա տեղ հրաւիրւում է Փերջամալ գիւղացի Դանիէլ Տէր Դանիէլեանցին (այժմ հանգուցեալ), որը մեծ արդիւնք է ցոյց տալիս, ուսման յառաջադիմութեան մէջ, և ամբողջ տարիւէկս մնալով վարձ է ստանում 825 րուբլի. բայց դրանից բարեգործ Գ. Թ. Այվազեանը 100 րուբլի էլ նուէր է ուղարկում նրա այրիին։

Այդ թուականումն է լինում, որ կառավարութիւնը պահանջում է հայ եկեղեցական ծխական դպրոցներում ուսուցիչները պիտի վկայական «ցենզ» ունենան, պետական ուսումնարաններից։ Բագու լինելով, ոմն հայրապետ Տիգրանեան, Երեւանի ուսուցչական Սեմինարիան աւարտած Պ. Գրիգոր Թ. Այվազեանը Հայրապետ Տիգրանեանցին վարձում է տարեկան 400 րուբլի ռոճիկով, հետը բերում է Շուշի, Թեմիս Գեր. Առաջնորդին ներկայացնում, և Տէր-Դանիէլեանցի հետ միացնում է, չարունակում են իրենց դասաւանդութիւնը Սարուշէնում։ Դպրոցի հիմնադիր բարերարը այդ երկուսին էլ առատ վարձատրութիւն է տալիս, սենեակ, փայտ, վառելիք և այլ պիտոյքներ։ Դրանց այդ առատ վարձատրութեան հետեւանքը, ի չարն է գործ դրւում ապերախտներից— այդ ուսուցիչներից։ Հայրապետ Տիգրանեանը, իւր վարձուելու օրը՝ գլխից ստանում է 250 րուբլի, և գալով Սարուշէն գիւղը, ամիսուկէս է պարապում, և դպրոցի հիմնադիր բարերար Գրիգոր Թոմասեան Այվազեանը, Բագւում գնում ժամանակը դարձեալ 30 րուբլի է տալիս Հայրապետ Տիգրանեանցին, որ դպրոցի աշակերտների համար, դասական գրքեր և այլ առարկաներ գնելու. բայց ամիսուկէսը դեռ չլրացած՝ Հայրապետ Տիգրանեանը, գալիս է Շուշի Թեմիս, Գեր. առաջնորդ Կարապետ եպիս. Այվազեանցին խնդրում, մի քանի օր արձակուրդ առնում տկարութեան պատճառով Երեւան գնալու, գնում է և այլ ևս չի վերադառնում, մինչեւ օրս և ամիս ու կէսին ստանալով 280 րուբլի։

Այդ ուսուցիչ անուանուած պարոնը, որ խաբում է փախչում Երեւան, նրանից յետոյ՝ վախճանում է Դ. Տէր-Դանիէլեանը Թօքախտից, որի տեղ դպրոցի հիմնադիրը հրաւիրում է, ոմն՝ Միքայէլ Ղալաբէկեան, զարգացած, ուսում առած Պետերբուրգի համալսարանումը, որ միանգամայն Հայոց և Ռուսաց լեզուները, առ հասարակ բոլոր առարկաները աւանդում է աշակերտներին ամիս ու կէս վարձ է ստանում 100 րուբլի. և ամիս ու կէսից յետոյ այդ Միքայէլ Ղալաբէկեանից յետոյ՝ բարերար Գրիգոր Թոմասեան Այվազեանը վարձում է Պ. Քրիստափոր Փիրջանեանցին, որը ունի պետական դպրոցից ուսուցչական «ցէնզ», տարեկան 500 րուբլի ռոճիկով, վառելիք, փայտ, ծառայ, սենեակ և այլն և այլն, որը այդ նոր հրաւիրուած ուսուցիչը կարող է հիմնադրի սրտի իղձերը կատարել։

Դպրոցի հիմնադիրը լինելով միշտ Բագւում եւ տարեկան մի քանի անգամ գալով Շուշի վերահասու լինելու. բայց հեռու լինելու պատճառով, հանգուցեալ Գրիգորիս եպիսկոպոս Սագինեանցի թեմիս նախկին առաջնորդի խորհուրդով, դպրոցի հիմնադիր բարեգործ Գրիգոր Այվազեանը դպրոցի ծախքերը եւ այլ գործերը, լրագիրներ ստանալը, բոլորը յանձնում է կոնսիստորիայի գրագիր Միրզա Տէր-Սարգսեանցին։ Հանգուցեալ Դ. Տէր-Դանիէլեանը այդ պարոնի՝ Միրզա Տէր-Սարգսեանի բարեկամը լինելով, երբ Թօքախտից վախճանւում է, յանդգնում է Միրզա Տէր-Սարգսեանը նամակով դիմել բարերար Գ. Թ. Այվազեանցին, թէ Սարուշէնի դպրոցն է եղել պատճառը իւր բարեկամի մեռնիլը. ինչո՞ւ համար կրկնապատիկ չէ տուել ռոճիկը, որ բժշկուելու գնայ։ Այսպիսի յանդուգն նամակով դիմում է դպրոցի հիմնադրին. ի՞նչ կարող էր անել, դպրոցի հիմնադիրը, քանի որ Թօքախտաւոր էր. միեւնոյն ժամանակ էլ Ս. Կաթողիկոսի և Ս. Սինոդի հրամանով ներկայ կապալով 300 րուբլի կամ 360 րուբլի է նշանակուած. մինչդեռ բարերար հիմնադիրը տուել է 825 րուբլի տարի ու կէսին. և վախճանուելուց յետոյ՝ 100 րուբլի էլ նուէր է ուղարկում նրա այրիին-Տէր Դանիէլեանցին։

Ես այդ նկատի առնելով հաստատ գիտեմ, որ ոչ ոք այդպէս չի անել առատ ռոճիկ տալով, կապալից դուրս. թէ՝ ուսուցիչը աւելի եռանդով աշխատի իւր դըպրոցի համար. բայց փոխանակ չնորհակալ լինելու առատ վարձատրութեանը համար՝ յանդգնում է դեռ դպրոցը հիմնադրին նամակներ գրելու։

ԱՐՑԱԽԵՑԻ

(Շարունակելի)

Աստի անտի

ՀՆՏԱԽՏԻՆ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԸ

Քանի մը օր առաջ Ուեթրէխի (Գերմանիա) մէջ սպասուհի մը անհանգստութիւն մը կ'ունենայ որ կը կրէր սոսկալի հիւանդութեան բոլոր ախտանշաններ։ Անմիջապէս, ամեն մարդ բժիշկ մը փնտռելու կը փութայ, բայց տանտիրուհիէն որ ջրային տագնապի մը ենթարկուելով, կը նուաղի։

Բժիշկները կը հասնին և կը հրամայեն որ նուաղեալ կինը մաքրանոց փոխադրուի։ Տան տէրը, տունը դառնալով, կը գտնէ իր ազախինը զուարթ և քաջառողջ, բայց չի գտներ իր կինն որ հիւանդանոցը կը դարմանուէր։

ԵՐԿԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՊԱՐԱԳԱՅ ՄԸ

1870ին, Պ. Շարլ Պ... չորս տարիէ հետէ ամուսնացեալ, կը լքէր իր կինն ու աղջիկը և կ'երթար ամուսնօրէն ապրել մանկամարդ դերձակուհւոյ մը հետ, Օր. Ալին Տ..., զոր ճանչցած էր այն աւետրական տան մէջ ուր երկուքն ալ պաշտօնեայ էին։

Տիկին Պ.. բնաւ հոգը չըրաւ իր ամուսնին լքումը։ Բայց աղջիկն ամուսնանալու վրայ ըլլալով, ութնոր առաջ սկսաւ ձեռնարկներ ընել ամուսինը գտնելու համար, որպէս զի, ըստ օրինի, առնէ անոր հաւանութիւնը մտադրեալ ամուսնութեան մասին։ Այն ատեն իմացաւ թէ ոչ միայն Շարլ մեռած էր 1891 ին, այլ և 1883ին ամուսնացած էր իր հանոնուհիին՝ Օր. Ալին Տ...ի հետ, Ռօնի մէկ քաղաքին մէջ, ուր կը գտնուէր մանկամարդ աղջկան ընտանիքը։

Երկու այրիներուն միջեւ բացուելիք դատն այնու մանաւանդ չահեկան է զի Պ..., որ ողջութեանը Շօսէ տ'Անթէնի հանրածանօթ վաճառական մըն էր, բաւական կլորիկ հարստութիւն մըն է թողած, որուն համար երկու կինները պիտի կռուըտին։

ՄԱՐԴԱՍՊԱՆ ԿՈՎԱՐԱԾ ՄԸ

Վերջերս ոճիր մը տեղի ունեցած է Ֆրէս գիւղն ի Ֆրանսա։

Ֆրանսուա Տօնա անուն կովարած մը կը յարձակի տիկին Ֆուանիէի և անոր աղջկան վրայ, որք խոզկաղին ժողվելու էին զբաղած, և կը սպանէ զանոնք կացինի հարուածներով։ Աղջիկն անմիջապէս մեռաւ, բայց մայրը, գանկը բացուած, բազուկը ջախջախուած, իր տունը փոխադրուեցաւ ողջ։

Անմիջապէս յետոյ Տօնա կ'երթայ հրացան մը կ'առնէ և Ֆուանիէի տունը կը դառնայ, գուցէ իր ոճիրը կատարեալ ընելու համար հայրն ալ սպանել ուզելով։ Բայց դուռը գոց էր։ Զկրնալով բանալ, հրացանը իր գլուխին կը պարպէ։

Տօնա՝ օրիորդ Ֆուանիէի ձեռքը խնդրած էր, բայց ծնողքը, ճանչնալով անոր բուռն բնաւորութիւնը, մերժած էին զայն, և մանկամարդ աղջիկն ուրիշ մէկուն հետ պիտի ամուսնանար։

ՄԻՋԱՏՆԵՐՈՒՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Միջատներն օժտուած են զօրեղային ահագին զօրութեամբ՝ բաղդատմամբ իրենց պզտիկութեան։ Մինչ մարդ, քանի մը վայրկենի ջանքով, իր ծանրութեան հինգ վեցերորդը միայն կրնայ վերցունել և ձին հազիւ երկու երրորդն իր ծանրութեան, ջօրեակը (գինա պեօճէք) իրմէ տասնչորս անգամ աւելի խոշոր բեռ կը տանի. պիծակը տասնվեց անգամ, բզէզը քառասուն և մէկ անգամ։— Այս հետաքրքրաշարժ արդիւնքները հաստատուած են Պելճիայի գիտուն Պ. Ֆէլիքս Բլասոյի կողմէ։

Ուոլթըր Սքօթ կը հաստատէ թէ՝ եթէ խունչայը (տեսակ մը խխունջ) աշտանակի մը տակ դրուի, միջատը պիտի չարժէ զայն՝ փախչելու համար. ինչ որ նոյն բանն է, կը յաւելու, եթէ մենք մէկը իրեն կռնակին երերցունէ Նիուբէյլթի չէնքը։

Որպէս զի առիւծ մը ցատքէ այնքան որքան կը ցատքէն մարախ մը կամ լու մը, պէտք է որ խոշոր գազանը մէկ քիլոմէթր ոստումներ ընէ։

Այսպէս, նախախնամութիւնն, իր իմաստութեամբն ու բարութեամբը, պզտիկ կենդանիներուն աւելի զօրութիւն տուած է քան մեծերուն, որպէս զի ատով հակակշռէ անոնց պզտիկութեան աննպաստ հանգամանքը։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

—Ուրեմն չէի՞ր գիտեր որ կինս և ես միեւնոյն օրը ծնած ենք։

—Ոչ, դեռ նոր կիմանամ. յիրաւի հազուագիւտ պարագայ մ'է, նոյնպէս ալ կինս և ես միեւնոյն օրը ամուսնացած ենք, գիտէ՞ք։

* * *

—Զարմանալի բան, գոչեց տիկին Ք..., մինչ կը կարդար լրագրի մը մէջ թէ Ռօչիլտ՝ ժամացոյցի իւրաքանչիւր թիք-թաքին չիլին մը կը չահի։ Կը խորհիմ թէ ի՞նչ պիտի ընէ արդեօք երբ ժամացոյցը աւրուի։

* * *

Իրագիտութեան դասի միջոցին.

Դասատուն. (Մ. Գ. ՄՈՋ...)—Գալով թափանցիկ առարկաներուն, ջուրը և ապակին թափանցիկ են, քանզի կրնաս անոնց մէջէն տեսնել։ Ուրիշ օրինակ մը կրնա՞ս տալ, Գրիգոր։

Գրիգոր.—Այո, պարոն, բանալիի ծակ մը։

Տ. Ս. Մ.

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏ

ԱԿՌԱՅՆԵՐՈՒ ԽՆԱՄՔ

Ատամունք՝ իբրեւ ծամելու եւ խօսելու գործիք՝ մարդուն համար մեծ նշանակութիւն ունենալուն, զանոնք վնասակար ազդեցութիւններէ պաշտպանելու եւ լաւ խնամելու համար հետեւեալ կանոնաց միտ դնելու է։

1. Շատ պաղ ու չատ տաք կերակուրներէ եւ ըմպելիներէ եւ խառնիխուռն մէ՛րթ տաք եւ մէ՛րթ պաղ ուտելէ զգուշացիր, վասնզի ասով ատամունք դիւրաւ իրենց փայլը կը տուժեն։ Նմանապէս սոխ, սամիթ ծխել ուտելը վնասակար է։

2. Առ նուազն օրն անգամ մը գաղջ ջրով եւ մրջալ կարծրութիւն ունեցող խոզանակաւ մը ակռաներդ լուա։ Կերակրէ ետքը բերանդ ցոլէ, որով ակռաներուն մէջ մնացած կերակրեղէնաց մնացորդը կը հեռացունես։ Նաեւ առաւօտ եւ երեկոյ պաղ ջրով կոկորդդ ողողելը զանց մի՛ առներ։

3. Կարծր իրեն, ինչպէս ընկոյզ, կաղին եւլն ակռաներովդ մի՛ կոտրեր, վասնզի ասով ակռաներու փայլը կը վնասուի։

4. Անմէջ ակռայները պէտք է չուտով լեցընել տալ, իսկ ցաւ պատճառողներն ու նմանապէս չատ փտածներն ալ հանել տալու է, վասն զի վերջինք նոյն իսկ առողջ ատամանց վարակուելուն պատճառ կ'ըլլան։

5. Ատամնաքարը բժշկի մը մաքրել տուր։

6. Դանակով կամ որ և իցէ մետաղէ ատամունքը մաքրելէ զգուշացիր, լուցափայտն իբրեւ ատամնաքար գործածելու չէ։

7. Նմանապէս ակռայով զունաւոր դերձան կտրելու չէ, որովհետեւ այսպիսի դերձանք չատ անգամ թունաւոր գոյներով ներկուած կ'ըլլան։

8. Ատամանց մէջ մնացած կերակրեղէնաց մնացորդները փայտէ կամ ատամանց փտած արմատէն յատուկ եկած ըսքն անձանց հոտը կը հեռացունէ ատամունքը լաւ մաքրելով եւ գերմանկանէզի կալիով խառնուած ջրով բերանը ողողելով։ Զօրաւոր ցքով ալ սին ակռայները կրնան մաքրուիլ, վասնզի ցքին ատամնակի որդերը կը սատկեցնէ։

9. Ակռայ մաքրելու փոշիներու եւ ջրերու մեծագոյն մասը խոտելի են, վասնզի այնպիսի նիւթ ու թթու կը բովանդակեն, որ ակռայի փայլը կ'ապականեն, եւ չունին այն ազդեցութիւնը, որ անոնց կը տրուի։ Ակռայ մաքրելու լաւ աժան ու անվնաս միջոց կը յանձնարարուին կաթնաշաքար ու ճագի փշրելով կողինծ։ Հացի կողինծ փոշին հեռեւեալ եղանակաւ կը պատրաստուի. կողինծները կասկարայի վրայ խորովելու է եւ յետոյ փոշի դարձնելու եւ քիչ մ'ալ աղ խառնելու է։ Թէ այս յիշեալ միջոցներով ատամունքը մաքրելէն վերջը՝ բերանը գաղջ ջրով ողողելու է՝ արդէն իսկ յայտնի է եւ յիշատակելն աւելորդ։

ՄԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ
ԲԱՌԱՐԱՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻԿ
Մեծադիր 1100 երեսներէ բաղկացեալ
Պաղտատլեան Տպագրութիւն
Գին 45 ղրուշ

Սոյն գիրատիպ եւ ստուար Բառգիրքն որ 93 ղրուշի կը վաճառուէր, առ հասարակ ամէն ազգայնոց եւ ի մասնաւորի բարձրագոյն կարգի ուսանողաց դիւրամատչելի ընելու համար Հեղինակն այս եղական զեղջութիւնն բրած է, անչափասպրառար։

Կեդրոնատեղին է Պաղտատլեան գրատունը, ի Կ. Պոլիս, Սուլթան-Համամ փողոց, Թիւ 14։ Կը գտնուի նաեւ գրավաճառաց բով։ 300 3—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՏԱՐՐԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
Սմբատ Դաւթեանի
Գին 2 ղուրուշ

Դիմել՝ Վալիտէ Խան, Ղազազներ խան, Թիւ 22, զրասենեակ յանձնակատարութեան Սմբատ Դաւթեանի։ 255 11—15

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
ԱԼԻԲՍԱՆ ԹԱՆՏՐՃԵԱՆ

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ ակռայի ամենէն անտանելի ցաւերը կը դարմանեմ անմիջական կերպով։ Առանց ակռան քաշելու, փտութիւնը ինչ վիճակի ու զիրքի մէջ ալ ըլլայ, 3-4 անգամ դարմանելով, ջղերու փտեցնելու գործը կը վերջացնեմ եւ փտած մասը կը լեցնեմ ապազային ցաւի, մաչելու եւ թափելու ամէն վտանգէ զերծ թողլու պայմանաւ։ Լեցուելիք նիւթն է ոսկի, բլաթին եւ այլն։

Կեղծ ակռայներ ոսկւոյ կամ քաուչուքի վրայ։ Այն անձինք որք իրենց կեղծ ակռայները բանիցս չինել տուած եւ ոչ մէկ կերպիւ անոնցմէ գոհ չեն մնացած, կամ զայնս զսպանակի ու թելերու հոգնեցուցիչ միջոցաւ կը գործածեն, թող դիմեն ինձ որ մաշած ու անկարելի կոչուած լինելերու վրայ կը զետեղեմ կեղծ ակռայներու ամբողջ կամ անչատ չարք մը եւ այս առանց զսպանակի եւ այլ որ եւ է ուրիշ միջոցի։

Նոր գրութեամբ կը հաստատեմ ոսկեայ նուրբ թեփերու վրայ ամբողջ ակռայ երու չարքեր որով բիմքն իւր համն եւ լեզուն իւր արտասանութեան կորովը ու նրբութիւնը չեն կորսնցներ, ակռայներն ալ աղէկ, հոտէ եւ կոտրելու վտանգէ զերծ կը մնան։ Զանազան ձեւերով կը պատրաստուին ֆրանսական, անգլիական եւ ամերիկեան դրութեամբ ակռաներ։

Փտած ակռաներու ամենախորին արմատներն անմիջական կերպիւ եւ առանց ցաւ պատճառելու կը քաշուին։ Դիմել առաւօտեան 1 էն մինչեւ ժամը 12 (Ր. Թ.), ի Բերա Թագսիմ, մեծ փողոց ֆրանսական հիւանդանոցին դէմ Թիւ 41։ 287

ՆԻՔՕԼԱ ԱՆՏՐԻՕՄԷՆՕ
ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ
Պոլիս Սուլթան Պայազիտ Քէբեճիլեր Պոլը Թիւ 99

Պ. Նիքօլա Անտրիօմէնօ այս անգամ Եւրոպայէ բերել տուած է լուսանկարչութեան յատուկ բազմաթիւ նորահնար գործիներ թէ՛ մեծ և թէ՛ փոքր լուսանկարներու պատրաստութեան համար։ Պ. Նիքօլա Անտրիօմէնօ ինքն անձամբ կը հանէ իրեն դիմող բազմաթիւ յաճախորդաց լուսանկարները։ Իբրեւ ապացոյց իւր կատարեալ յաջողութեան և յաճախորդացը հարկ եղած ապահովութիւնը տալու համար կը ծանուցանէ որ եթէ լուսանկար մը առաջին անգամ չյաջողելով տիրոջը կողմէ մերժուի, պատրաստ է երկրորդ անգամ հանել զայն։ Ո՛վ որ կը փափաքի թէ՛ աժան գնով, թէ չուտ և թէ բնականին նման լուսանկար մը ունենալ կրնայ աւելորդ օգուտ քաղելով դիմել Պ. Նիքօլա Անտրիօմէնօի լուսանկարչատունն, ուր ամեն կերպիւ գոհ պիտի մնայ։

Ինչպէս որ յստակ և պայծառ օրերու մէջ, նոյնպէս ամպոտ և մառախլապատ օրերու մէջ եւս լուսանկարք միեւնոյն յաջողակութեամբ պիտի հանուին նոր գիւտերու չնորհիւ։

Զգուշացէ՛ք կարգ մը անձերէ, որք ինքզինքնին իբրեւ լուսանկարիչ կը ներկայացընեն։ 80—90

[illegible] ՕՇԱՐԱՆ

Կ. Պոլիս, 15 Մայիս 1883

Պարոնայք Աճեմ և Պասուն,

Յօրմէ հետէ սկսած եմ գործածել ձեր Աճեմի Օշարակը, միշտ լաւ արդիւնքներ ունեցայ մանկանց խուլային և անուրիւնութեան հիւանդութեանց քանի մը դէպքերու մէջ։

Իմ կարծիքս է թէ այս հաճոյ և յաջող պատրաստութիւնը միշտ նախամեծար համարուելու է Մօռէւ ձկան իւղէն և կը յանձնարարեմ զայն։

ՏՐ. Ա. ՌՆՏԻԼԱՏԻՍ
Նախկին բժիշկ Օսմանեան բանակի

ԻԼԱՆ ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Նիզամիէ սարաճխանէ անպարը իչիւն միւպայեա օլունմագ իւզրէ մէվգըի միւնագասայա գօնուլան 1000 գըլէյի ճէտիտ պէնտըլ եսսամագ գէթէն իբիկինին պէհէր գըլէյի ճէտիտի 14 ղրուշ 30 փարայա օլարագ Թալիպի էօհտէսինտէ օլուպ Թէչրինի սանինին 2 ինճի կիւնիւնէ գատար պէհէր կիւն միւնագասայը պիլ իճրա մէզքիւր կիւնտէ գարարը գաթիի վիրիլէճէկինտէն իթասընա վէ իրթէսի կիւնիւ 100տէ 5 թէնզիլինէ Թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի ըէվգըլմէթը ուտա միւբէյ ասլարինէ կէլմէլէրի։ Նօ. 22 1—3

Թարապլուսը Ղարպ Փիրգասը իչիւն միւպայեա օլունաճագը էվէլճէ իլան գըլընան չըլպաքտան 20,000 ճէտիտ քիլէ պուղտայըն պէհէր քիլէսի 52 ղրուշ, վէ 273,000 գըէյ տագիգին պէհէր գըէյսի 42 փարայա վէ 355,000 գըէյ Մըսըր բիրինճինին պէհէր գըէյսի 70 փարայա, վէ 76,000 գըէյ նօհուտըն պէհէր գըէյսի 52 փարայա վէ դիյէր 76,000 գըէյ ֆասուլեանըն պէհէր գըէյսի 32 փարայա, վէ 49,000 գըէյ շէքէրին պէհէր գըէյսի 95 փարայա չէրայիթի մուգարրէրէսի իլէ Թալիպլէրի էօհտէսինտէ օլուպ Թէչրինի սանինին 2 ինճի բազար իրթէսի կիւնիւ պիլ միւնագասա գարարը գաթիի վիրիլէճէկի վէ իրթէսի սալը կիւնիւ տախի 100 տէ 5 թէնզիլի գապուլ օլունաճաղը Թալիպ օլանլարըն մագամը Սէրասքէրի ըէվգըլմէթը տէքի միւպայեա գօմիսիոնինա կէլմէլէրի։ Նօ. 23 1—3

Հայկական Անտոնեան

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգղ. Ոսկի 1,000,000

«ՖԻՆԻՔՍ»

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ՚է՝ որոյ քաջածանօթ Անգղիոյ ամենահարուստ և համբաւաւոր դրամատէրերն են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18,000,000 Անգղ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 34

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ՚ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ ստորագրելոյս, որք ունին լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍՈՒԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պուլկարիոյ և Սեւ ծովու եզերաց
Թիւ 11՝ և 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական Թղթատան վերև

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ ԵՒ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ	Ֆռանք	8,000,000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1890	»	6,165,860
Տարեկան հասոյթ » » »	»	14,135,925

Ընկերութիւնքս **ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ** կ՚ապահովագրեն մթերանոցներ և բնակութիւններ և սոցա մէջ գտնուած վաճառքներ և կարասիներ խիստ չափաւոր սակագնօք

Լիազօր Ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՌԱՆՔՖՕՐԹՈՒԱՋ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ Ֆռանք 6,250,000 Պահեստի դրամ Ֆռանք 1,270,300

Ընկերութիւնս կ՚ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև Թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած թանկագին նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Այն նիւթերու վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար Ընկ. Ֆիւզիոն միացած է նորոգեալ 13 լուրջ ապահովագրական հաստատութեանց հետ որոց դրամագլուխ ու պահեստի դրամն է Աւելի քան **100,000,000** Ֆռանք

Լիազօր Ներկայացուցիչ համայն Թուրքիոյ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ-Գաբու, Անանիատիս խան 12, 13, 14

ԻՂԱՆ ՊԱԳԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Նիզամիէէ Խազինէսի աղարաթընտան Տէֆթէրտար ճիվարընտա Փէսմանէ գարշըսընտաքի պօսթան գոնթրաթօսը միւնգազիէէ օլուպ, իշպու 308 սէնէսի բուզը գասըմընտան իթիպարէն, Թալիպլէրէ քիրաեա վիրիլէճէկլէրինտէն Թալիպ օլանլարըն իշպու Թըշրինի Էվէլին Նիհաեէթինէ գատար մագամը Սէրասքէրի չիւպէի մախսուսէսինէ միւրաճաաթ իթմէլէրի։

Նօ. 21 2—3

ԼԱՆՔԱՇԱՅՐ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՄԱՆՉԷՍԹԸՐ

Հիմն. 1852ին

Դրամագլուխ Անգլ. Ոս.	3,000,000
91 դկ. 31ին աւանդ տրուած գմ.	1,771,006
1891 դեկ. 31ին պահեստ	1,635,903
Հասոյթ 1891 ին	1,851,329

Այս ընկերութիւնը ընդդէմ հրդեհի կապահովէ ամէն տեսակ շէնք, կահ, ապրանք, ի Պոլիս և ի շրջակայքն ինչպէս և Նաւահանգստին մէջ.

Վնասի ատեն արագ և խղճամիտ վճարում։

Տեղեկութեանց համար դիմել առ գործակալութիւնն ընկերութեան, 1 և 2 Իզզէթ փաշա խան, Ղալաթիա

ՌԻՉԱՐՏ Մ. ՊՈՆՏ
Ներկայացուցիչ
257 ՊՈՆՏ, ՍԷԼԼԸՐ ԵՒ ԸՆԿ.

VICHY

ՎԻՇԻ

Ֆրանսա (գաւառ Ալլիէ)

ԿԱԼՈՒԱԾ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

Վարչութիւն՝ Փարիզ, 8, Պուլվար Մօնմարթր

ՀԱՆՔԱՋՐՈՅ ԵՂԱՆԱԿ

RANDE GRILE.— Աւշային տկարութիւնք, մարսողական ճանապարհաց հիւանդութիւնք, լեարդի և փայծաղի [illegible], ներքին գործարանաց խցմունք, խըճային քար և այլն։

HOPITAL.—Մարսողական ճանապարհաց հիւանդութիւնք, ստամոքսի ծանրութիւն, դժուարամարսութիւն, ախորժակի պակասութիւն ստամոքսի, Ջղացաւ, անմարսութիւն։

CELESTINS.— Երիկամանց և փամփուշտի տկարութիւնք, միզական աւազ և միզական քար, յօդացաւ, շաքարախտ (Տիապէթ), սպիտակուց – միզական (Ալպիւմինիւրի)։

HAUTERIVE.— Երիկամանց և փամփուշտի տկարութիւնք, աւազ, քար, յօդացաւ, շաքարամիզութիւն, սպիտակուց – միզական։

Աղբիւրին անունը պէտք է փնտռել շիշերու քափսիւլին վրայ։

Կը գտնուի դեղագործական Անգլիական մթերանոցն և Պոլսոյ բոլոր դեղագործաց քով։ 2203

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվէրփուլի և Միջերկրականի մէջ բանող շոգենաւք

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Քառնաք	4200	Սֆինքս	3000
Ֆարօս	4000	Օզայրիս	3000
Օսմանլի	4000	Նեֆթիս	3000
Սէզօսդրիս	3250	Բէրա	3000
Թիպս	3250	Լօտուս	800
Մեմֆիս	3250	Օլիմպոս	800
Մարեօթիս	3250	Սեթօս	700

«Բէրա» շոգենաւը դէպի հոկտ. 31ին Լիվրբուլէն աստ կը սպասուի ընդհանուր վաճառքով։

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և Ընկ.
Ուիթթըլ խան
ՋԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
292 31, Ջէյմս Սդրիդ Լիվրբուլ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ԲԱՑՈՒՄՆ Ա. ՀԱԱՍ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԱՃԱՌԱՏԵՂՒՈՅՆ
որ ի Ղալաթիա, փողոց Վօյվօտա, Նորատունկեան խան, Թիւ 6, 7 և 8
ի 1/13 Նոյեմբերի 1892

Զանազան և ճոխ բեղոյրք, կանանց գլխու ծածկոցք, Սեղանի ծածկոց և անձեռոցներ, Ճերմակեղէնք, Սրփիչ, Թաշկինակ, անկողնոյ ծածկոց, Քօրսէ, կանանց շապիկներ, գիշերազգեստներ, և այլ տեսակ կանանց վերաբերեալ իրեղէններ։ Անուշահոտ նիւթեր և այլն և այլն։

Կը խնդրենք արգոյ հասարակութենէն այցել մեր վաճառատունն ուր հետեւեալները կը վաճառուին աժան գիներով և յոյժ նպաստաւոր պայմաններով։

ԳՈՐԾԱՐԱՆԻ ԳԻՆ 306

EMULSION SCOTT



(ՍԳՕՏԻ ՕՃԱՌԱԿ)

ՄՈՐՈՒԻ ՁԿԱՆ ԶՈՒՏ ԻՒՂ

Իփօֆօսֆիթով մը լուծ և տոտոյն

Պատրաստեալ Տեառն ՍԳՕՏԻ և ՊՕՈՒՆԻ ի Նիւ-Եորք։

Կաթին չափ ախորժահամ է

Մորուի ձկան համ իւղի բոլոր յատկութիւններէն զատ, Իբրօֆօսֆիդներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճողածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Գործակատարք ի Կ. Պոլիս, ՀԱՄՊԷՐ ԵՒ ՀԻՐԵԱԼ

NEVRALGIES ՋՂԱՑԱՒ ԱՆԿԱՐԳ, ՍՆԴՈՒԹՍԻ ԽԻԹԹ, և ջղային բոլոր հիւանդութիւնք կը բուժեն ՏՈՔԹ. ՔՐՕՆԻԷԻ ԱՆԹԻՆԵՎՐԱԼԹԻՔ դեղահատներով։ Տուփը 3 ֆր.— Պահանջել Գործարանատարց Միութեան դրոշմը, կեդրոնատեղի՝ Դեղ. Ռօպիքէ, 23, Մոնէ փողոց, Բարիզ։ Ի Կ. Պոլիս Մէգիքի և Ընկ., դեղավաճառք, և ամէն շատ դեղարաններ։

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱՒՔ

Երբեմն Լիվրփուլ, Կ. Պոլսոյ և Օտեսայի մէջ

ԹՈՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ և ԸՆԿ.

Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ	Անուանք	Թօնոյ
Ալպանօ	2000	Ֆլամինկօ	1600	Բալէրմօ	3200
Ամէլօ	3000	Կալիլէօ	5500	Բանտէր	1700
Արօլլօ	5500	Կիդանօ	2200	Բլաթօ	1500
Արկօ	2300	Կօզօ	1800	Բօլօ	1000
Արիօսդօ	3000	Կրօտնօ	2200	Քուիդօ	2800
Պասանօ	3000	Հիրօ	2000	Րիալթօ	4400
Պօրօտինօ	2200	Հիտալկօ	3000	Րինալտօ	3200
Պրաւօ	2000	Հինտու	7000	Րօլլօ	3000
Պէթթալօ	8800	Հումպէր	1200	Րօմէօ	3500
Գէյրօ	2600	Այակօ	5000	Րօզարիօ	3500
Գալիբսօ	2500	Ճիւնօ	2300	Սալէրնօ	4000
Գամէօ	2100	Քէլօ	2000	Սանդիակօ	8200
Գադօ	2000	Քօյրինօ	4200	Սաֆօ	2000
Գօմօ	2700	Քօմնօ	2200	Սիլվիօ	2000
Չիքակօ	5000	Լէօ	2000	Սօրէնտօ	4300
Գլիօ	3500	Լէանտրօ	4500	Թ. Ուիլսըն	3000
Գօլօրատօ	3400	Լիվօրնօ	3000	Թուրսօ	1200
Տիգօ	2500	Մալմօ	1500	Թօլիտօ	2800
Տօմինօ	2500	Մարէնկօ	4300	Թօրրիտօ	900
Տուրօ	4800	Մարգէլլօ	6500	Ուրպինօ	5000
Տրագօ	2100	Միլօ	2000	Վօլթուրնօ	5000
Էյյանամ	2600	Մուրինօ	3100	Եէտօ	3600
Էլտօրատօ	3000	Նէրօ	2000	Զէպրա	1000
Էլէքթրօ	3200	Օրլանտօ	3000	Տիֆալինըն	200
Հրաթօ	2600	Օթէլլօ	5000	Հէլմօ	200
Ֆալքօն	800	Օգրանօ	4500	Չէրօ	140
Ֆիտօ	700	Օտօ	2000	Մօսքիթօ	120

Էճիբչըն Մոնարք	8000
Բերժէն Մոնարք	8000
Լեգին Մոնարք	8100

«Բայրօն» շոգենաւը, Նաւապետ Մաքրըմ, ընդհանուր վաճառքով Հըլէն մեկնած է Նոյեմբեր 2ին (Ն. Տ.) և 15ին աստ կ՚սպասուի,

Առաջնորդութեան համար ամեն տեղեկութիւն կ՚ընծայուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՌԻՑՕ
Գործակալք
Թիւ 17-18, Քիւչիւք Միւմէթ
293 խան, Ղալաթիա

COMP. RUSSE DE NAVIGATION A VAPEUR ET DE COMMERCE

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Շաբթուան երթեւեկութիւնք

Բշ. 26 7 Օտեսայի սուրհանդակ, ժամ 2էն յետ միջօրէի։
Գշ. 27 8 Աղեքսանդրիոյ ուղղակի սուրհանդակը ժամ 5էն յետ միջօրէի. Պիրէյոն ճամբով,
Դշ. 28 9 Սեվաստոպոլի սուրհանդակ, առաւօտեան ժամ 10ին։
Դշ. 28/9 Սուրհանդակ դէպի Փոքր Ասիոյ Նաւահանգիստները մինչեւ Պաթում առաւօտեան ժամը 11ին։
Շ. 21/10 Օտեսայի սուրհանդակ, ժամ 2էն յետ միջօրէի։

Ազդ.—Հոկտ. 28/9, երեքշաբթի օրը Կ. Պոլսէն դէպի Սուրիոյ Նաւահանգիստները մեկնող սուրհանդակը Զմիւռնիոյ մէջ պիտի հանդիպին Թրիբոլի Պէյրութ, Եաֆա, և Բոր-Սայիտ գացող շոգենաւուն։ 12

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՑԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ԲԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիայի և Պոնտոսի մէջ կանոնաւորագիծ բանող

Սամսոն, Տրապիզոն և Պաթում երթալիք յառաջիկայ շոգենաւն է Անտիլ որ Հոկտ. 29ին Մարսիլիայէն և Նոյ. 14ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Սիլյանս։

Բարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաւ ուղեւորութիւնն ի միասին առնլով,

Ա. կարգ 245 Ֆրանք
Բ. » 175 »

Ռօղէնի և ապրանքի օժանդակութեան

Նաւողջէքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարս
ԹԻՄՈԹԷ ՐԸԳՈՒԼ
5 Մումհանէ Սիթէ Ֆրանսէ

ՌՈՅԵԱԼ ԷՔՍՉԷՆՃ ԱՍԻՒՐԱՆՍ ՔՕՌՓՕՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷՆ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720 ԻՆ

Դրամագլուխ աւելի քան	Անգլ. ոսկի	4,000,000
Ցարդ հրդեհի արկածից համար տուած է	»	35,000,000

Ընկերութիւնը կ՚ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամեն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

Վճարումք ամենայն կանոնաւորութեամբ և անյապաղ առանց որ և իցէ **ԶԵՂՉԻ** կը կատարուին։

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ճ. Վ. ՈՒԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ.
140 Պահճէ Գաբու, Մէյտանճըք սօքաք, Ուիթալ խան։

ՀԻՒՍԱՐԱՆ

221 Մեծ-Փողոց, Բանկալթի

Բանկալթիի մեծ հիւսարանին մէջ կը պատրաստուին մետաքսեայ, Ֆիլ տ՚Էքօսէ, բուրդէ եւ էսմբրամատուրը գուլպաներ եւ զանկապաններ, ձեռնոցներ, փոտուակներ, քաշ-քօրսաժներ, անկողնոյ ծածկոցներ եւ հիւսուածագործութեան ուրիշ ամեն տեսակ նիւթեր։

Տնօրէնութիւնը շնորհակալ կ՚ըլլայ բազմաթիւ յաճախորդաց, ինչպէս նաեւ այն ընտանեաց որք բարեհաճած են պատուել զինք իրենց յանձնարարութիւններով, եւ կը յուսայ թէ պիտի հաճին շարունակել յառաջիկային նախապատուութիւն տալու տեղական սոյն գործարանի նիւթերուն, որք տեսակի մասին նման են Եւրոպիոյ սոյն օրինակ նիւթոց եւ աւելի աժան են անոնցմէ։

Գործարանը կը վաճառէ նաեւ ընտանեաց համար հիւսելու լաւ մեքենաներ եւ գործաւորուհեաց յատուկ այլ մեքենաներ որք կրնան օրը մինչեւ 24 զոյգ արտադրել, հիւսուածագործութեան դասեր ալ կը տրուին։ 253

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱՑ

ԳԻԾ Կ. ՊՈԼԻՍ—ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ—ՊԷԼԼՕՎԱ

Արեւ. ճեպ. Թ. 2 Բշ. Եշ. Ա.	Կուխ. ճեպ. Թ. 4 Ամեն օր ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 62 Ամեն օր ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 132 Բշ. Եշ. ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 124 բայց ի Բշ. և Եշ. ԱԲԳ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխ. խառն Թ. 123 բայց ի Բշ. և Եշ. ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 131 Դշ. Շբ. ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 61 Ամեն օր ԱԲԳ	Կուխ. ճեպ. Թ. 7 Ամեն օր ԱԲԳ	Արեւ. ճեպ. Թ. 5 Դշ. Շբ. Ա.
ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.		ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
7 20	8 15	6 30			Մկ. Կ. ՊՈԼԻՍ ժմ.			8 32	8 22	4 00
		6 41			Գումգաբու			8 23		
		6 53			Եէտի—գուլէ			8 07		
		7 12			Մագրիգիւղ			7 44		
		7 26			Այաթէֆանոս			7 22		
		7 45			Քիւչիւք—Չէքմէճէ			7 07		
		8 29			Սբարթա—գուլէ			6 22		
	9 33	9 05			Հատըմքէօյ			5 56	6 58	
		9 45			Չաթալճա			4 53	6 17	1 50
9 38	10 31	10 25			Գապաքճէ			4 20		
		11 27			Սինէքլի			3 29		
	12 12	12 09			ժմ. Չէրքէզքէօյ մեկնում			2 37	4 58	12 09
	12 14	12 40			մկ. Չէրքէզքէօյ ժամանում			2 12	4 33	12 04
12 04	12 56	1 41			Չօրլու			1 26	3 56	
		2 33			Մուրաթլը—Քէօբէքլի			12 26		
		3 05			Սէյտլէր—Չիֆթլիք			11 53		
	2 28	3 44			Լիւլէ—Պուրկազ			11 16	2 26	
2 05	2 53	4 30			Պապա—Էսքի			10 39	2 00	9 33
		5 13			Պապլը—քէօյ			9 40		
	3 58	6 03			Ուզուն—Քէօբրիւ			8 56	12 50	
	4 16	6 47			Գուլէլի—Պուրկազ			7 46	12 51	8 09
		7 12			Ուրլի			7 14		
4 21	5 09	7 59			ժմ. ԱԴՐ. ՊՈԼԻՍ մկ.			6 25	11 37	7 14
4 29	5 19			3 15	մկ. ԱԴՐ. ՊՈԼԻՍ ժմ.		1 25		11 22	7 09
				4 07	Գառըքէօյ		12 32			
5 26	6 12			4 57	ժմ. Մուսթաֆա փաշա մկ.		11 39		10 27	6 12
5 31	6 32			5 17	մկ. Մուսթաֆա փաշա ժմ.		11 19		10 02	6 07
6 14	7 13			6 33	ժմ. Հարմանլը մկ.		9 54		9 19	5 23
6 20	7 38			6 38	մկ. Հարմանլը ժմ.		8 48		8 59	5 18
	8 01			7 38	ժմ. Թըրնովա-Սէյմէնլի մկ.		8 01		8 33	4 33
	8 11		10 50		մկ. Թըրնովա-Սէյմէնլի ժմ.	12 50			8 25	4 48
	8 47		11 50		Գայաճըք—Հասքէօյ	12 06			7 32	
	9 34		1 07		Եէնի—Մահալլէ	10 50			7 05	
8 38	9 59		1 49		Բարապալը	9 58			6 39	3 06
	10 25		2 24		Գաթունից—Սթանիմաք	9 04			6 14	
9 23	10 44		2 49		ժմ. Ֆիլիպէ մկ.	8 25			5 54	2 17
9 33	11 04		3 20		մկ. Ֆիլիպէ ժմ.	7 51			5 34	2 12
	11 58		4 41		Թաթար Բազարճըք մկ.	6 45			4 43	
	12 22		5 12		ժմ. Սարամպէյ մկ.	6 00			4 17	
	12 23				մկ. Սարամպէյ ժմ.				4 16	
11 10	12 44				ժմ. Պէլօվա մկ.				4 01	12 44
3 20	4 29				Սօֆիա				12 34	15
2 10	9 30				Նիշ				5 51	9 20
8 45	4 48				Պէլկրատ				10 35	37
9 40	1 20				Պուտապէշթ				2 40	2 30
3 16	7 20				Վիեննա մկ.				8 30	—

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Սահմանեալ վայրկեանները կը ցուցնեն իրիկուան ժամը 6էն և առաւօտեան ժամը 5.59ի միջեւ եղած գիշերուան ժամանակը։

2.—Կ. Պոլսոյ արուարձանաց ժամանակացոյցը մասնաւոր ցուցակ մը է եղած։

3.—Ձախակողմի սիւնակաց մէջ կառախմբոց մեկնման ժամանակը պէտք է կարդալ վերէն վար, և աջակողմի սիւնակաց մէջ վարէն վեր։

4.—Թիւ 321 «խառն կառախումբը» ի Թրնովա—Սէյմէնլի կը հաղորդակցի 7 Թիւ «պայմանագրական կառախմբին» հետ։

5.—Թիւ 322 «խառն կառախումբը» ի Թրնովա—Սէյմէնլի կը հաղորդակցի Թիւ 4 «պայմանագրական կառախմբին» և Թիւ 131 «խառն կառախմբին» հետ։

6.—Թիւ 621 խառն կառախումբը Իւսքիւպի մէջ կը հաղորդակցի՝ Զիպէֆչէ գացող Թիւ 522 և Սէլանիկ գացող Թիւ 513 խառն կառախմբոց հետ։

7.—Մասնաւոր վակոն մը աւելցուած է Թիւ 7 և 4 պայմանագրական կառախմբոց, արեւելեան ճեպընթացին չբանած օրերն, այսինքն.

Կ. Պոլսէն մեկնող Թիւ 4 կառախմբին) Կիրակի, երեքշաբթի, չորեքշաբթի ուրբաթ և շաբաթ օրերը
Պելովայէն մեկնող Թիւ 7 կառախմբին) Կիրակի, երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը

Ուղեւորք կրնան զայնս ի կիր առնուլ յաւելուածական սակ մը վճարելով։

Ա. կարգ	Բ. կարգ	
Ֆր. 10.—	Ֆր. 7.—	Կ. Պոլսէն Ադր. Պոլսոյ համար կամ փոխադարձաբար
» 12.—	» 9.—	Կ. Պոլիս Փիլիպէ Պելովայի համար կամ փոխադարձաբար

8.—Արեւելեան Եւրոպայի ժամանակը [Ա. Ե. Ժ.] 4 վայրկեան առաջ է Կ. Պոլսոյ տեղական ժամուն վրայ։

9.—Միջին Եւրոպիոյ ժամանակը [Մ. Ե. Ժ.] 32 վայրկեան ետք է Սէլանիկի ժամուն վրայ։

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ԳԻԾ ՍԷԼԱՆԻԿ—ԻՒՍՔԻՒՊ—ԶԻՊԷՖՉԷ

Կուխմբ. խառն Թ. 512 ամեն օր ժ. վ.	Կուխմբ. խառն Թիւ 522 ամեն օր ժ. վ.	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխմբ. խառն Թիւ 523 ամեն օր ժ. վ.	Կուխմբ. խառն Թիւ [illegible] ամեն օր ժ. վ.
5 10		Սէլանիկ (Պիւֆէ) ժմ.		10 13
5 44		Թօփսին մկ.		9 41
6 21		Ամաթօվօ		9 04
6 43		Քարասուլու		8 41
6 53		Կիւմէնճէ		8 31
7 31		Կէօրկէլի		7 59
8 05		Միրօվչէ		7 18
8 15		Ուտրուցա		7 06
8 47		Տէմիրգաբու (Պիւֆէ) ժմ.		6 32
8 57		Տէմիրգաբու (Պիւֆէ) մկ.		6 17
9 42		Քրիվօլագ		5 43
10 21		Վէնից—Կրագօ		5 00
11 08		Քէօբրիւլիւ ժմ.		4 10
11 18		Քէօբրիւլիւ մկ.		4 00
12 06		Չէլէնիքօ		3 17
12 42	1 06	ԻՒՍՔԻՒՊ (Պիւֆէ) ժամ. մեկ.	2 20	2 41
	1 47	Աճալար	1 44	
	2 49	Գումանովա	1 07	
	3 15	Թապանովչէ	12 29	
	3 43	Բրէշովա	12 04	
	3 58	Պուգանովչէ	11 46	
	4 21	Պույինէվչէ	11 16	
	4 34	Զիպէֆչէ	11 00	
	9 53	Նիշ	5 51	
	4 48	Պէլկրատ	10 53	
	1 20	Պուտապէշթ	2 40	
	—	Վիեննա մկ.	8 30	

ԳԻԾ ԻՒՍՔԻՒՊ—ՄԻԹՐՕՎԻՑԱ

Կուխմբ. խառն Թիւ 622 Բշ. Դշ. ուրբ. ժ. վ.	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխմ. խառն Թիւ 621 Դշ. Եշ. Շբ. ժ. վ.
7 15	Իւսքիւպ (Պիւֆէ) ժամ.	12 29
8 22	Էլէշան մկ.	11 36
9 17	Քաչանիք	10 59
10 27	Վէրիզօվից	10 12
11 20	Լիփլիան	9 11
12 12	Բրիշթինա	8 16
12 58	Վուչիթռն	7 22
1 15	Միթրօվիցա մկ.	7 00

ԹԸՐՆՕՎԱ—ՍԷՄԷՆԼԻ—ԵԱՄՊՕԼՈՒ

Կուխ. խառն Թ. 321 Բշ. Եշ. ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 323 Կիր. ԱԲԳ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխ. խառն Թ. 322 Դշ. Շբ. ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 324 Բշ. ԱԲԳ
9 15	1 40	մկ. Թրնվ-Սէյմէնլի ժմ.	7 20	9 42
9 58	2 25	Գարաբունար	6 46	9 15
11 05	3 32	Բոնէ—Մահալէսի	5 45	8 14
12 13	4 43	Եէնի—Զաղրա	4 42	7 09
1 11	5 41	Սիմէօնօվօ—Քրմանլը	3 41	6 18
2 00	6 50	Եամպօլու ժմ.	2 40	5 10
6 58		ժմ. Պուրկազ մկ.	9 40	

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ—ՏԷՏԷ ԱՂԱՃ

Կուխ. խառն Թ. 221 Բշ. Դշ. և ուր. ԱԲԳ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխ. խառն Թ. 222 Գշ. Եշ. և Շբ. ԱԲԳ
7 51	մկ. Ա. Պոլիս ժամ.	6 53
8 47	Ուրլի	5 58
9 33	Գուլէլի — Պուրկազ	5 30
10 10	Տիմէթօգա	4 38
11 22	Սուֆլի	3 31
12 20	Ֆիրէճիք	2 31
1 21	Ֆէրրէ	1 29
2 22	ժմ. Տէտէ—Աղաճ մկ.	12 20

Արտօնատէր Ս ՏԱՄԱՏԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ